

63

U-65

370
1856-UC

30 JUL, 2010

195
63(07)
U-63

Ա Յ Ե Ր Ո

Հ. Հ. Ա.

Պ

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

Ա

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԵՐ

1003

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՆԳԱԺԵ-
ՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ:

(Հայ բնտելիկնոցիայի ուշադրութեան):

II.

ԽԱՂԱԿԻՒԻ ՌԱՍՈՒՄ ԲԱՐԱՆԱՆԵՐ ԵԱ
ԽԱՐԱԿԱՆՈՐ ՄԱՂ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան «Էկոնոմիա» Աւ. Մահմետի. Յակովիանցին:

Մհծ-Վանքի փողոց, № 2.

1910

17.07.2013
14730

14664

Իր սիրելի և անդին մեծ մայրիկին և
մօքաքրօց նւիրում է որդիական ակնածութեամբ
իր անզբանիկ համեստ աշխատութիւնը ի նշան
խորին երախտագիտութեան

Հ Ե Կ Ւ Ա Կ Բ

Հոգևոր առաջնային պատրիարք
եկեղ.-ժիշկ. (օրինակ)

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Գիւղատնտեսութիւնը առաջնակարգ նշանակութիւն ունի բոլոր երկրների համար:

Գիւղատնտեսութիւնն է, որ ընդգրկելով ազգաբնակութեան ընդարձակ խաւերը, պետութեան հիմքն է կազմում, նա է նիւթական բարեկեցութեան հիմնաբարը, նրա բարգաւածումով է պայմանաւորւած իւրաքանչիւթ երկրի բարօրութիւնը: Ակներև փաստ է, որ որքան աւելի է զարգացած լինում մի երկրի գիւղատնտեսութիւնը, նոյնքան աւելի նախանձելի գըրութեան մէջ է գտնւում նրա ազգաբնակութիւնը:

Մենք շատ ենք մտատանջւել հայ գիւղացու անելանելի գրութեամբ. միշտ երազել ենք՝ որսէ կերպ օգտակար հանդիսանալ գիւղացուն: Իւրաքանչիւր անհատ, որը ձգտում է մասնակից անել ամենքին գիւղացիութեան հոգատարութեան խնդրին, սրանով արգէն ծառայում է հայրենիքին և նպաստում է ժողովրդի բարօրութեան:

Մենք զեռ ուսանողական օրերում փափակում եինք ծլած ու ծաղկած տեսնել մեր գիւղատնտեսութիւնը, իրականացած տեսնել մեր գիւղատնտեսական ուսումնարանները և ընկերութիւնները: Բայց այս նըսպատակին համնելու համար հարկաւոր է փոխել մեր մէջ տիրող գիւղատնտեսական սիստեմներն ու միջոցները: Մաղկած գիւղատնտեսութեան գաղափարը կ'իրականանայ միայն այն ժամանակ, եթե հողի հետ կապւած մատաղ սերունդը կը ծանօթանայ հողի հո-

գերանութեան ու պայմանների, ու գիւղատնտիսութեան նոր մետօնների ու միջոցների հետ:

Մեր գլոբոյկը կաղմելիս օգտւել ենք զանազան աղբիւրներից: Մինչև այժմ մեր գրականութեան մէջ բացակայում են գիւղատնտեսական դպրոցների պատրաստ ու մշակւած ծրագիրներ և մեր աշխատութիւնն էլ գեռ կատարեալ ամբողջութիւն չէ. այլ նա գալիս է միայն լրացնելու բազմաթիւ թերութիւններից մէկը. թող նա լինի մի նախագիծ, որը ապագայում մշակւելով ու կատարելագործելով, կը յարժարւի մեր գիւղատնտեսական պայմաններին: Յոյս ունինք, որ մեր գլոբոյկը սիրալիս ընդունելութիւն կը գտնի հայ հասարակութեան և մանաւանդ գիւղատնտեսութեամբ պարագողների կողմից, ինչպէս պլոֆեսօր Հայնէկը գրում է մեզ իր մի նամակում այս աշխատութեան առիթով «Ես կարծում եմ, որ Դուք գրել էք այն բոլորը, ինչ որ վերաբերում է բուն գործին, և լիայոյն եմ, որ Զեր հայրենակիցները սիոնվ կընդունին Զեր աշխատութիւնը»:

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՆԳՐԱԺԵԾ- ՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ:

Այն մարդը, որի չնորհիւ երկու ցողուն է բունում այնանի, որ առաջ միայն մէկն էր բունում, աւելի է նպաստում ժողովրդի բարօրութեան, քան բոլոր քաղաքագէտներն ու փիլիսոփաները միասին:

Ի. ՍՎԵԹԸ.

Հասարակաց բարօրութիւնը ներկայացնում է մի ծառ, երկագործութիւնը այս ծառի արմատն է, արհեստագործութիւնը և վաճառականութիւնը ճիւղերն ու տերեններն են. եթէ արմատը փշանայ, տերենները կը թափւին, ճիւղերը կը կոտրատւին, և ծառը կը մհոնի:

Երկրագործութեան և ընդհանրապէս հողի մշակութեան պատմութիւնը անխղելի կերպով կապկաւած է մարդկային կեանքի ամբողջ պատմութեան հետ: Մենք չենք կարող գիւղատնտեսութեան մասին խօսելիս միացած կուլտուրական ֆակտորների պէս նրա սկզբնաւորմից սկսել: Ե՞րբ են արդեօք մարդիկ սկսել հողի մշակութեամբ պարագաւել, կամ թէ այն ո՞ր բաղաւոր երկիրն է եղել, ուր առաջին գութանը պատուել է կուսական հողի թարմ կուրծքը, ու մարդիկ սկսել են ցանել ու հնձել—ոչոք չէ կարող

որոշ պատասխան տալ այս հարցերին, որովհետեւ հողագործութեան սկիզբները կորչում են ընդհանուր պատմութեան նախնական մառախուղի մէջ։ Տակաւին այն ժամանակներում, երբ հին աշխարհի կուլտուրական ազգերը սկսեցին մասնակցել հանրամարդկային պատմութեանը, հողագործութիւնը վաղուց արդէն անցած էր իր նախնական դարեշրջանը։ Դրականութեան հնագոյն յիշատակարանները—հին կտակարանը, ինչպէս և չօմերոսը պատկերացնում են մեր առաջ գիւղական կեանքը և հողագործութիւնը բաւական զարգացած դրութեան մէջ։ մենք տեսնում ենք, թէ ինչպէս երկրագործը խարոյկի վրա զօ՞ն է բերում իր հօտի անդրանիկները, իր արտի ամենաընտիր պտուղները. սոյն հեղինակները պատմում են մեզ զեղեցիկ մշակւած արտերի, ու գիւղացու բազմաթիւ հօտերի մասին, նկարագրում են մեր առաջ ձիթենեաց պարտէզներն ու պտղառատ այգեստանները, մեր ականջներին նորից հնչում է հունձ անողների ցնծութեան ձայնը, մեր աշքի առաջ տեսնում ենք, թէ ինչպէս յոգնած մշակը, ցերեկւայ ծանը աշխատանքից յետոյ, անուշ է անում գործատիրոջ առաջարկած պարզ ընթրիքը։

Հին աշխարհի մարդիկ հաւատացած էին, որ հողագործութեան արհեստը մի վսեմ, երկնային բան է, ուստի և նրա գիւտը վերագրում էին ոչ թէ մարդկային հանճարին, այլ աներե-

ւոյթ աստւածներին։ Յունական ու Հոօմէական աւանդութեան համեմատ, Արամազդն էր, որ առաջին անգամ լուծ գրեց զորիների վզին և այսպիսով մարդկանց՝ հողոց հերկել սովորեցրեց և հնագոյն հացահատիկը՝ ցորենը ցանեց։ Իսկ Ցէրէսը ծանօթացրեց մարդուն բոլոր միւս հացարոյսերի հետ, և Դիօնիսիոսը գաղափար տւաւ նրան խաղողի մասին։ Ահա թէ ինչու հողի մշակութեան գործը նեղքուստ կապւած էր հին ազգերի կրօնի հետ։ Հողագործութեան ասպարիգումն էր, որ մարդը զգում էր իր սաստիկ կախւածութիւնը բարձրագոյն զօղութիւններից և իր անձնական անզօրութիւններից։ Հացահատիկը սերմանելիս երկրագործը իր յոյսը գնում էր երկնային էակների բարի կամքի վրա, իսկ երբ արտերը հասունանում էին, խնդրում էր նա երկնային զօրութիւններին, որ իր արտը ազատեն կարկտից ու փոթորկից, ցըտից ու տոթից, և հունձը վերցացնելով վարձատրում էր աստուածներին՝ նւիրաբերելով իր արտի լաւագոյն արդիւնքները։

Եյն երկիրը, ուր մարդս քըտինքը ճակատին փորում է զետինը, սերմանում ու հնձում է, ուր նա խրճիթ է կառուցանում և շտեմարանները պաշարով լցնում, հետզինետէ աւելի ու աւելի գրաւում է նրա ուշքն ու միտքը, հմայում է սիրտը ու դառնում է նրա սիրոյ առարկան. այստեղից է ծագում այն ախորժելի գգացմուն-

քը, որ մենք ունենում ենք դէպի մեր ծննդավայրը և հինգ այդ նոյն զգացմունքն է, որ աւելի զարգանալով և աւելի զիտակցական դառնալով, վերջապէս հայրենասիրութիւն է կոշւում:

Անհատական և ընտանեկան բնակատեղիներից առաջ են գալիս համայնքները, որոնք արդին աւողական կերպով դառնում են իրանց մշտական հողի տիրապետը: Իսկ ուր տիրապետութիւն կայ, այնտեղ և իրաւունք ու օրէնք կայ. մինչև առասպելական ժամանակները հասնող հնագոյն օրէնքները ապահովում են իմն ու ու Քոնը, սրբազործում են հարեանի անհատական սեփականութիւնը, իսկ սահմանանենդութիւնը համարում են մահւան պատժին արժանի մի զարհութելի յանցանք:

Սեփականութիւն ունեցող կիւղական դասակարգի մէջ առաջ է գալիս քաջամարտիկ զինւորը, որ նախապէս վարժում է՝ կոիւ մղելով գայրի գազանների դէմ, և ընտելանալով ձմեռային ցրտին ու ամառային տօթին, իւրաքանչիւր ըռպէ պատրաստ է նա՝ պաշտպանելու իր կայքն ու պատիւը. մինչև իր արեան վերջին կաթիլը:

Հոդի մշակութեան գործը հետզհատէ զարդանւում է. ևս ացւում է առատ հունձ: Անասնապահութիւնը օրէցօր աւելի արդինաւէտ է դառնում: Դիւղացին այժմ աւելի անասուններ ու հաց ունի, քան անհամաշաշաւ է իր անմիջական գործածութեան համար: Ուստի նա սկսում է

իր աւելորդը տալ ուրիշներին, փոխարէնը ստանալով զանազան նիւթեր ու առարկաներ. այսպիսով ծագում է ասպրանքներ փոխանակելու սովորութիւնը, որը հետզհատէ կանոնաւոր առուտուրի կերպարանք է ստանում: Խթաքանչիւր ժողովուրդ սկսում է տանել իր հայրենի բերքերը դէպի օտար շուկաներ ու փոխարէնը բերել այնպիսի ապրանքներ, որ ինքը չունի: Ծաղկող վաճառականութեան օգնութեան է զալիս տեխնիկան, բացելով հեշտ հաղորդակցութեան համար պիտանի ճանապարհներ և ստեղծելով հաղորդակցական աւելի յարմար միջոցներ: Բաւական է յիշել Անգլիայի օրինակը, ուր շոգուոյժը առաջին անգամ գործադրեցին՝ հողի արդիւնքները տեղափոխելու համար:

Ուրեմն թէ կրօնի, թէ օրէնսդրութեան, թէ զինւորական կազմակերպութեան, թէ վաճառականութեան արմատները պէտք է որոնել զիւղական տնտեսութեան մէջ:

Այժմ պիտի կանգ առնեմ հին հոօմայեցոց զիւղական տնտեսութեան վրա: Հոօմայեցիք էին, որ զիւղական տնտեսութիւնը ու հողագործութիւնը հասցէին մի այնպիսի բարձրութեան, որին զեռ մինչէ օրս էլ շատ երկիրներ հապի են զերազանցում: Մինչեւ մեր զարը, այսինքն մինչև երկլազործական մեքենաների զիւտը, համարեա ամեն տեղ շարունակուում էին հնադարեայ յալաբերութիւնները: Հոօմէական կուլ-

տուրան մեծ ազգեցութիւն է արել ընդհանրապէս եւրոպական կուլտուրայի վրա ու հոօմէական գիւղատնտեսութեան հետքերը, որ ես նըկատիկ եմ նոյնիսկ թէյնի ամերու՞մ, մինչև օրս էլ դեռ չեն անհետացել:

Ուր ոտք էին դնում հոօմէական լէգիօնները, իսկոյն երևան էին գալիս այս ու այն կուլտուրական բոյսերը, եթէ միայն կլիման նպաստաւոր էր երևում: Հոօմայեցոց ձեռքով կուլտուրալի համար բացւած բոլոր երկիրներում դեռ շարունակում է մալ նոյն արտը ու խաղողի այգին, երկրագործութեան ու գինեգործութեան ասպարիգում գործածւող բազմաթիւ առարկաների ու գործիքների անունները տակաւին յիշեցնում են մեզ հին լատինական արտայայտութիւնները:

Հոօմայեցիք մեծ ուղախութեամբ մշտաբնակ էին դարձնում իրանց զինուրական բանակները այն երկիրներում, որ ձեռք էին բերում զէնքի ոյժով. այսպիսով հողագործութիւնը տարածւում էր և այն ժողովրդների մէջ, որոնք մինչեւ այն ժամանակ ոչ մի գաղափարը չունէին հողի մշակութեան մասին. թափառական ցեղերն անգամ ընտելանում էին հողագործութեան և սկսում էին նստակեաց կեանք անցուցանել, գիւղեր ու քաղաքներ հիմնել:

Նորանոր պետութիւններ կազմակերպող, աշխարհներ տիրապետող Հոօմը առաջ է եկել

երկրագործ Հոօմից:

Մի ուրիշ տեսակէտից նոյնպէս արժէ ուշագրութիւն դարձնել հին-հոօմէական գիւղատնտեսութեան վրա: Այսօրւայ գիւղատնտեսը, որի յիշողութեան մէջ դեռ թարմ է հողաբաժանութեան ժամանակամիջոցը, և որը հետաքրքրում է մաքսային տարիքով և երկրագործական քաղաքականութեամբ, անշուշտ կը կամենայ իմանալ, թէ արդեօք այդ նոյն հարցերը յուզում էին հոօմայեցոց սրտերը. նա կը տեսնէ, թէ ինչպէս հոօմայեցոց մէջ հողաբաժանութիւնը տեղի էր ունենում ճշգրիտ նախագծի և հաշվի համեմատ՝ յատուկ երկրաչափի ձեռքով, թէ ինչ հովանաւորող միջոցներ էր ձեռք առնում կառավարութիւնը՝ արտասահմաննեան մըրցութեան դէմ, թէ ինչպէս էր հոօմէական սենատը հացեղէնի գները նշանակում, թէ ինչպէս էին հեռատես անհատները ընդդիմանում՝ դէպի մեծ քաղաքները գաղթելու հոսանքին, և ամեն ջանք գործ դնում՝ գիւղական դասակարգը իր արժանի բարձր դիրքի վրա դնելու: 2է որ մեր ժամանակակից գիւղասէրին էլ պիտի բաւականութիւն պատճառէ այն նշանաւոր խօսքը, որ ասում էր քաղաքէտ Կատօնը հողագործութեան մասին, թէ «այդ կոչումը ամենաբարոյական և ամենախաղաղասէր կոչումն է, և այն մարդիկ, որ հողագործութեամբ են զբաղւում, հազիւ են վատ մտածում»:

Ես նովառակ չունեմ այսուհեղ աւանդել գիւղատնուեսութեան պատմութիւնը, այլ կամենում էի միայն թուոցիկ գաղափար տալ նրա անցեալի մասին։

Ես ընդունում եմ, որ պատմութիւնը նեղ կայի ուսուցիչն է։ Բայց այդ անհերքելի ճըշմարտութիւնը չէ կազմում այսօր իմ ընտրած նիւթը։ Իմ նպատակն է լուսարանել միայն այն հարցը, թէ որքան անհրաժեշտ է մեր ժամանակ յատուկ գիւղատնուեսական կրթութիւնը։ Սակայն գիւղական տնտեսութեան ժամանակակից պայմանները ուղիղ են հիմնառը համար հարկաւոր է գաղափար ունենալ թէ գիւղական տնտեսութեան անցեալ զարգացման և թէ առնասարակ կուլտուրայի պատմութեան մասին։ Ընթերցողին շատ հեռու տանելու մըտագրութիւն չունեմ ես, միայն պիտի ներկայացնեմ նրա հոգեկան աշքերի առաջ միջնադրեան շրջանը, երբ խօսք լինել չը կարող գիւղական տնտեսութեան էական առաջադիմութեան մասին։ Միջակ ու մանր երկրագործը սահմանափակւած էր իր փոքրիկ հողարտնի շահագործութեան շրջանում և իր ոյժն ու ժամանակը շատ անգամ գործ էր գնում իրաւատէր կալւածատիրօց օդտին։ Այսպիսով կաշկանդւած էր գիւղատնուեսական արդիւնաբերութեան ազատ զարգացման գործը, և ուրեմն փակւած էր ժողովրդի նիւթական ապահովութեան պահանջութեան գլխաւոր

աղբիւրներից մէկը։ Գիւղատնուեսական ամբողջ գողծառնութիւնը այդօրինակ պայմանների շընորհիւ գարձել էր խիստ միատեսակ ու շինովի։ ահա թէ ինչու գիւղական տնտեսութիւնը մնաց միենոյն անշարժ գրութեան մէջ համարեա մի ամբողջ հազարամեակի ընթացքում, այսինքն Կարլ Մեծի օրերից մինչև 19-րդ դարի սկիզբները։ Բնական է, որ այսպիսի ճնշման տակ գտնւած միջակ ու մանր գիւղացիութիւնը աւելի ու աւելի բուն եռանդով տենչում էր գէպի ազատութիւն։ Վերջապէս գանակը ոսկորին հասաւ, և կապանքները խորտակւեցին։ Հետեանքն այն եղաւ, որ հողային հին իրաւունքը վերացւեց, կամ թէ օրէնքներ հրատարակւեցան հողերի յետ գնելու կամ նոր հողաբաժանութեան մասին։ Եւ այդ ծրագիրները իրականացան տասնութերորդ դարի վերջերում ու տասնիններորդի սկիզբներում։ Եւ այսպէս խորտակւեցին այն կապանքները, որոնք արդելը էին լինուու գիւղական տնտեսութեան գործի զարգացման, և ճանապարհը հարթւեց նրա առաջադիմութեան համար։ Գիւղատնուեսութեան ասպարիզում թագնւած ոյժերը մօտ եկան և նպաստեցին նրան՝ մասամբ որպէս գործնական աշխատաւորներ, մասամբ էլ որպէս գիւղական հետազոտողներ։ Հողից ստացւող արդիւնքը, նախկին ժամանակների հետ համեստած, զօրեղ կերպով աճեց, և այս պատճառով սաստիկ բարձրացաւ

Հողաբաժինների գինն ու կապալը։ Հողատէրեցն ու կապալառուներն ստիպւած եղան կրկնակի ջանքեր գործ դնել, որ կարողանան ըստ կարելոյն աւելի շահ ստանալ, ներքին մըսութեան վրա աւելացաւ արտասահմանեան մըսցումը, որ անընդհատ զարգանող հազորդակցական միջոցների հետևանքն էր։ Գոյութեան այս ջերմ կուի մէջ բնական է, որ իր շահը հասկացող գիւղատնտեսը ձգտում էր աւելի խորը ըմբռոնել հողի մշակութեան հետ կապ ունեցող բնական երեսոյթները. ահա թէ ինչու մեր ժամանակում այնպէս արագ զարգացաւ երկրագործական գիտութիւնը։ Առաջ եկան նորանոր մեքենաներ ու գործիքները: Երկրագործը տեսաւ, թէ ինչպէս տնտեսութեան միւս ասպարէզներում (օրինակ. վաճառականութեան, արհեստի, ճարտարապետութեան) մասնագիտական դպրոցներ են հիմնում և ինքն էլ ըմբռնեց իր մասնաւոր գիւղատնտեսական ուսումնարանների անհրաժեշտութիւնը։

Դիւղատնտեսական առաջին դպրոցը հիմնվեց Ռուսաստանում, 1793 թւին, Պաւլ Ի կայսրի օրով, բայց տարաբախտաբար շուտով փակվեց։ Վաթսունական թւականներին բացւեցին Պետրոսեան ճեմարանը, Նօվօ-Ելէքսանդրեան ինստիտուտը, և մի գիւղատնտեսական բաժին՝ Րիզայի պօլիտեխնիկումին կից։ 1863 թւին բացւեց Պետերբուրգում մի գիւղատնտեսական

— 18 —

ՀԱՅՈՒ ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈBLԻԿԱ ԲՈՂՈՆՈՒԹՅԱՆ
7/11. 1922 մին-
իր գույնի թիւնը պահեց մին-
70 թիւն՝ Ամիսանց Խոսկութ
գիւղատնտեսական պարու-
սընթացով: Ներկայումս Ռու-
թիւն ունեն՝ 2 ինստիտուտ
ունտեսականը, որ 1894 թը-
փակւած Պետրոսեան ճեմա-
նլէքսանդրեանը), մի բանի
բաժիններ՝ պօլիտեխնիկում-
օրինակ Ռիգայում, Կիևում
այլն: Գիւղատնտեսական մի-
իւր մօտ 30 է. բացի այդ,
ըէալական դպրոցներին կից:
գիւղատնտեսական դպրոց-
լի են: Առհասարակ Ռու-
սց սկսած, գիւղատնտեսական
թիւր անընդհատ աճում է,
կան պահանջ կայ: Վերջերս
ունտեսական դպրոցների սկզբնա-
գիւղատնտեսական շրջաններն
իւղական տնտեսութեան աս-
ումբոնել են, որ ժողովրդա-
ւած սոսկ ընդհանուր կրթու-
յն անբաւարար է: Ընշուշտ
իրանց որոշ նշանակութիւնը
անք հնարաւորութիւն չունեն՝
սցու գաւակներին այն անհրա-
գիւղելիքները, որ նրանք յե-

տագայում դառնան զիտուն ու բանիմաց աշխատաւորներ՝ զիւղական տնակութեան պատասխանատու ասպարիզում:

Ի հարկէ, երիտասարդ զիւղացին իր հօրից ու պապից էլ ստանում է որոշ տեղեկութիւններ հողի մշակութեան և առհասարակ զիւղական տնտեսութեան մասին. իւրաքանչիւր զիւղացի, առանց մասնաւոր ուսում առնելու էլ ունի որոշ հմտութիւն իր գործի մէջ: Այնուամենայնիւ այդ բոլորը դեռ շատ քիչ է և միանգամայն անբաւարար այն մարդու համար, որը կը կամենար բառի ժամանակակից հասկացողութեամբ զիւղական տնտեսութեամբ պարապել: Գիւղական տնտեսութեան ասպարիզում այժմ առաջ են եկել արդինաբերական նորանոր միջոցներ, օրինակ հէնց հողի պարարտացնելու կամ անասուններին սնուցանելու գործի մէջ. մերենաներ են հնարեւել, որոնց մասին նախկին զիւղացին ոչ մի գաղափար չէ ունեցել և որոնցից միմիայն այն մարդը կարող է օգտվել, ով պատշաճ ուսմանազիտական կրթութիւն է ստացել և կանգնած է ժամանակի բարձրութեան վրա: Նոյնիսկ այն զիւղացի երիտասարդը, որ հասկանում է տնտեսական նոր ձեռների նշանակութիւնը և կամենում է խելացի հիմունքների վրա գնել իր տնտեսութիւնը, կը շփոթի տնտեսական նորամուծութիւնների առաջ, եթէ ինքը բաւարար զիւղատնտեսական կրթութիւն

չէ ստացել: Նա միայն տատանւելով կը ձեռնարկէ բարեկոսութիւնների գործին, չետ կը մտայ ուրիշներից, կամ թէ մի շարք անյաշող փորձեր անելով յուսախար կը լինի, բանի որ ինքը միմիայն կոյը ընդորինակող է, և չէ կարողանում պատշաճ փոփոխութեան ենթարկել նորամուծութիւնները, յարմարեցնելով իր սեփական առանձնակի հանգամանքներին: Եթէ երկրագործը չգիտէ, թէ այս ու այն հունձը ինչ նիւթեր է խլում նրա հողից և որ քանակութեամբ, ապա նա ինչպէս պիտի վերականգնէ իր հողի կորուստը, ինչպէս պիտի վերազարձնէ գետնին նոյն նիւթերը: Նա հեշտութեամբ չի ըմբռնիլ, թէ պարարտացման որ եղանակն է աւելի կարենը, և զժւարութեամբ կը համաձայնի զրամ վճարել արհեստական պարարտացման պիտանի նիւթերին, որոնց յատկութիւնները հասկանալի չեն նրա համար, և ինքը բոլորովին չգիտէ, թէ ինչ է լինելու նրանց ազգեցութիւնը: Վերջապէս եթէ զիւղացին լաւ չէ ըմբռնում իր արտի բնաւորութիւնը, պիտի երկիր կը, որ պարարտացնելուց անմիջապէս յետոյ տեղացող զօրեղ անձրել կարող է քշել — տանել թանգագին նիւթը և այսպիսով զէրօյի հաւասարացնել նրա գործ դրած աշխատանքը: Գիւղացին չէ կարող նպատակայարմար կերպով կազմակերպել իր վիթիրանոցը և կանոնաւոր ուշագրութիւն դարձնել պարարտացնելու զործի

վըա, եթէ նա պարզ չգիտէ, թէ ինչու փթիրը պիտի հաւասարապէս շերտաւորւած լինի, ամուր թուփ արած և ժամանակ առ ժամանակ պիտի թացացնէի: Որքան անվստահ կը լինի նա՝ անասուններին սնուցանելու գործի մէջ, եթէ որոշ չգիտէ, թէ ինչ նիւթերից է բաղկացած անասնի օրդանիզմը, որ նիւթերից և որ բանակութեամբ անհրաժեշտ են ընտանի կենդանիների սննդի համար, կամ թէ այս ու այն սնունդը ինչ ուղղութեամբ է ազդում՝ արդեօք կաթն է առատացնում, թէ ճարպը, թէ կենդանի գիւղիկական ոյժը: Ո՞վ է տեսել, որ մեր նենայ իր տնտեսութեան մէջ. սակայն հաշիւը տնտեսութեան ոգին է, և առանց հաշիւների կատարող տնտեսութիւնը միշտ ենթակայ կը լինի մեծ ու փոքր սխալնքների և չէ կարող վնասներից խուսափել: Գիւղացուն մեծ վնաս են հասցնում զանազան միջատներն ու պարագաները, որոնք կատարեալ պատուհաս են դաձել թէ բոյսերի և թէ անասունների համար. անհրաժեշտ է մարառել սրանց դէմ, բայց արի ու տես, որ գիւղացին յօժարութեամբ յանձն չէ առնում այդ գործը, և եթէ յանձն էլ առնի, չի կարող յաջողութեամբ կոհւ մզել, բանի գեռ իր համար պարզ չէ այս չնչին օրդանիզմների էութիւնն ու կեանքը: Յաճախ գիւղացիք մինչեւ անդամ նախապաշտամք են լինում վնասակար

օրդանիզմների բնաջինջ անելու սովորութեան դէմ: Այդ տխուր զրութեանը վերջ կը տայ միայն գիւղատնաւսական կրթութիւնը: Խօսքս պարզելու համար կը բերեմ մի շօշափելի փաստ: Յայտնի է, թէ ինչ աւերածներ է անում ֆիլոկաներա կոչւած պարագիտը խաղողի ալգիներում: Գիրմանիայում սրա վերաբերմամբ խիստ օրէնքներ են հրատարակւած. օրինակ, Հէսսէնում օրէնքը այնքան խիստ է, որ ոչ ոք իրաւունք չունի այգի տնկելու՝ առանց նախապէս իրաւունք ստանալու կառավարութիւնից, և եթէ մէկը այս օրէնքի դէմ մեղանչից, նրա տնկած այգին տակնուգրա կանեն և ախտահանութեան կենթարկեն տիրօջ հաշւին: Մի ժամանակ ամենքը գանգատուում էին այսպիսի զրութեան դէմ, բայց երբ ազգաբնակութիւնը, գիւղատնտեսական կրթութիւն ստանալով, ըմբռնից յիշեալ պարագիտի բազմանալու զարհուրելի ընդունակութիւնը, այլևս ոչ ոքի մտքով չէ անցնում խիստ օրէնքներին ընդդէմ լինել: Եւ ահա ներկայում Հէսսէնում ֆիլօկաներայի պատճառած վնասը հարիւր անզամ ըիշ է, բան թէ ուրիշ տեղերում, օրինակ էլզաս-Լոտարինգիայում: Կրկնում եմ, որ այս բանը հնարաւոր դարձաւ, որովհետեւ ազգաբնակութիւնը զաղափար ստացաւ պարագիտի կեանքի մասին և յօժարութեամբ ենթալկուց օրէնքի խիստ պահանջներին:

Վերջապէս հոփասասարդ զիւղականը կարող է արդեօք հետեւել՝ անընդհատ զարգանող զիւղատնտեսական գյականութեան, եթէ նա չունի համապատասխան տարրական կրթութիւն. Մենք կարող ենք անթիւ օրինակներ բերել՝ ցոյց տալու համար, որ գործնական աշխատանքու և գիւղական տնտեսութիւնը պիտի ձեռք ձեռքի տւած առաջ գնան, եթէ մենք կամենում ենք բարոր դրութեան հասնել. Կրթութիւնը ոյժ է ներշնչում, և միայն այն մարդը կարող է զիւղակցական բայլնը անել տնտեսական աշխարհում, որը ձեռք է բերել հիմնար զիւղատնտեսական կրթութիւն. նա միայն կիմանայ, թէ ինչու է ինքն այսպէս կամ այնպէս գործում, ով ըմբռնում է պատճառի ու հետևանքի ներքին կապը, և ճիշտ զիտէ, որ այս ու այն գործողութիւնը անպատճառ այս ու այն որոշ հետեւանքը կունենայ. նա միայն կը կարողանայ նախազգուշանալ վնասակար հետեանքներից և չի ենթարկիլ անախորժ փորձոնքների: Երիտասարդ զիւղացու մտածողական ու զատողական ընդունակութիւնները պիտի զարգանան, և այդ բանը հնարաւոր է միայն այն դէպրում, երբ նա, բացի մի լաւ ընդհանուր կրթութիւնից, կը ստանայ համապատասխան մասնագիտական կրթութիւն, առանց որի դժւար է, նոյնիսկ անհնարին է պարապել զիւղատնտեսութեամբ՝ այս բառի ժամանակակից հասկա-

ցողութեամբ: Մեր ժամանակ, երբ ազգաբնակութիւնը խտացել է ու ճանապարհների հազորդակցութիւնը զարգացել, անհրաժեշտ է, որ տնտեսութիւնը լինի ինտենսիւ, այսինքն ըստ կարելոյն շատ բերք տւող, թէն շատ էլ կապիտալ պահանջող: Մրա համար հարկաւոր է ոչ միայն դրամ, այսինքն նիւթական կապիտալ, այլև անհրաժեշտ է ստաւոր կապիտալ, որ է մասնաւոր զիւղատնտեսական կրթութիւն: Եթէ մի երիտասարդ, ժողովրդական տարրական դպրոցից բաց ուրիշ դպրոցի երես չէ տեսել, հազիւ թէ կարողանայ լրացնել այս պակասը ինքնուսուցմամբ: Պատահել են բացառիկ անհատներ, որոնք ինքնակրթութեամբ փոքրիշատէ լրացըլ են այդ պակասը, բայց սրանք կը պատմեն ձեզ, թէ ինչ մեծ տանջանք է ներկայացնում ուսանելու այդ եղանակը. իսկ հեշտութեամբ, առանց չարչարւելու կարելի է սովորել միմիայն մի բանիմաց ուսուցչի առաջնորդութեամբ, երբ սա ձեռքի տակ ունի դասաւութեան հարկաւոր միջոցները, ի միջի այլոց մի պատշաճաւոր փորձնական հողաբաժին:

Մի ժամանակ յաճախ պատճում էր, որ զիւղացու որդին, նպատակ ունենալով ապազյում շարունակել հօր զբազմունքը, և այժմից կամենալով գիտականօրէն պատրաստւել, մըտնում էր կլասիկական գիմնազիա կամ ըէալական դպրոց. ներկարումս այսպիսի քայլը խելա-

ցի չի համարւիլ: Թէս ամեն մի ուսում իր որոշ նշանակութիւնն ունի, սակայն հարց է ծագում, թէ արդեօք ձեր սովորածը որևէ զրական արդիւնք ունենալու է երբեք: Եխը երկրագործի ինչին է պէտք հին, մեռած լիզուների քերականութիւնը, որ նա սովորում է կլասիկական գիմնազիայում, մինչդեռ նա չէ կարող կարգին որոշել իր անասունների սննդի քանակը, չէ ըմբռնում, թէ ինչ ու ինչ նիւթեր պէտք է ձեռք բերել, որպէսզի ձմեռը կենդանիները սովամահ չինին: Կամ թէ զիւղացու ինչին է պէտք բէալականում վայրիվերոյ սովորած ֆրանսերէնն ու գերմաներէնը: Նա ուսումնասիրում է ոտանաւորների տողաշափութեան արհեստը, բայց չէ կաբողանում չափել իր արտը, որոշել հողի կազմածքը, իր ձիու տարիքը, կովի կաթնատութեան աստիճանն և զնահատել խոզի շաղանալու ընդունակութիւնը: Եժմ ուշ դարձեք այն առարկաների վրա, որ անցնում են զիւղատնտեսական դպրոցներում. հողագործութիւն, երկրագործութիւն, հողի պարարտացման եղանակները, այգերանութիւն, անասնապահութիւն, կաթնատնտեսութիւն, անասնաբուժութիւն, բանշարացնութիւն, այգերանութիւն, գինեգործութիւն և այլն—հինց ալդ անունները պարզապէս շեն ցոյց տալիս այդ առարկաների օգտակարութիւնը. սրանցից ո՞րն է աւելորդ մի հողագործի համար: Հեռու գնացած կը լինէինք

մինք, եթէ սկսէինք այստեղ մի առ մի ցոյց տալ, թէ յիշեալ առարկաներից իւրաքանչիւրը որքան սերտ կերպով կապւած է գործնական աշխատանքի հետ: Աւելացնենք, որ բնական գիտութիւնների բովանդակութիւնից էլ ընտրում են այն մասերը, որոնք կազմում են այս ու այն գործնական գիտութեան հիմքը, թէն բոլոր բնական գիտութիւններն էլ պիտանի են՝ զիւղելու, դատելու, ստածելու ընդունակութիւնները զարգացնելու համար: Պարագտացման գործը անհասկանալի կը լինէր առանց տարրական խմբայի. բուսագիտութիւնը կազմում է տնկաբանութեան ու այգերանութեան հիմքը. կենդանաբանութեան վրա են հիմնած անասնապահութիւնն ու անասնաբուժութիւնը: Դորձիքների ու մեքենաների գիտութիւնն ու երկրագործութիւնը դժւար է առանց ֆիզիկայի: Նոյն իսկ այն առս ըկաւերը որոնք ըստ երեսյթին ընդհանուր կրթութիւն են տալիս, ովհեղատնտեսական դպրոցներում պիտի սահմանափակւած լինեն մասնագիտական նպատակներով: Ինչ վերաբերում է հայերէնին ու ուսերէնին՝ պէտք է աշխատել, որ աշակերտները մանաւանդ հմուտ լինեն բերանացի ու գրաւոր արտայացութեան մէջ: Եյժմ երկրագործը շատ աւելի գրաւոր յարաբերութիւններ ունի, քան թէ առաջւայ ժամանակներում. նա պիտի կարողանայ կանօնաւոր նամակներ գրել և գանագան պայմանաթշըդ-

թեր կազմել. նոյնիսկ ձեռագրի գեղեցկութիւնը
նշանակութիւն ունի նրա համար. Եւ եթէ դրա-
գրութեան մէջ գիւղացին պիտի վաճառականից
յետ չը մնալ, որքան առաւել պիտի հետեւ նը-
րան կանօնաւոր հաշւապահութե սն մէջ: Թւարա-
նութիւնը անցնում են բոլոր դպրոցներում, բայց
գիւղատնտեսական դպրոցներում պէտք է թւա-
րանական խնդիրների նիւթը զլխաւորապէս
վերցնել գիւղատնտեսական կեանքից: Աշխար-
հագրութիւնը պիտի սովորցնէ երիտասարդ հո-
գագործին՝ բացի իր հարազատ հայրենիքից գա-
ղափար ունենալ մըցակից երկրների և նոյնպէս
հաղորդակցութեան ճանապարհների մասին: Եր-
կրաշափութեան ու գետնաշափութեան միջոցով
նա սովորում է գնահատել տարածութիւնները,
մակերեսոյթները, և հարկաւոր ժամանակ հողերը
որոշ բաժինների վերածել: Նկարչութիւնը ոչ
միայն գեղարւեստական ճաշակ է զարգացնում,
այլև սովորցնում է գծագրել գործիքներ ու մե-
քենաներ, կազմել զանազան շնչառերի յատա-
կագծեր և այլն: Նոյնիսկ էկսկուրսիաները, ո-
րոնք ընականաբար շատ արժէքաւոր բաներ
կարող են սովորցնել, այն էլ մի տեսակ խա-
ղալով ու զւարճացնելով, պիտի իրօք այնպէս
ծրագրւած լինեն, որ մասնակցողները այցելեն՝
հոգատնտեսութեան համար կարեորութիւններ, կալ-
ւածքներ, ցուցահանդէսներ և այն: Իւրաքան-

չիւր առարկայից աշակերտը պիտի վերցնէ մի-
այն այն, ինչոր իզուր բեռք չի դառնալու նրա
համար, ալ յետագալ գործնական կեանքում,
մի արդիւնաւէտ ցանքսի նման, բնքնելու է իր
շահը, այսպէս ասած՝ պսպղուն ուկու որոշ քա-
նակութիւն—չէ՞ր իւրաքանչիւր տնտեսական
գործունէութեան անմիջական նպատակը ուկին
է: Ուրեմն ինչ մեծ բան է, ծախսել մի փոքրիկ
կապիտալ՝ գիւղատնտեսական դպրոցում ուսա-
նելու համար, քանի որ յետագալում նա յետ է
ստացւելու տասնապատիկ տոկոսներով: «Գի-
տութիւնը և բանիմացութիւնը մի զօրու-
թիւն է, որ զուտ փողից էլ աւելի գին ունի»:
Խելացին է արդեօք այն գիւղացի հայրը, որը
կարծում է, թէ աւելի լաւ է մի փոքրիկ գու-
մար յետաձգել իր որդու համար, քան թէ այդ
գումարը ծախսելով, գիւղատնտեսական կրթու-
թիւն տալ նրան: Եւ որ հայրը կատ խնամակալը
կարող է հանգստացնել իր խիզճը մտածելով՝
«Ես ինքս մասնագիտական ուսում չեմ ստացել,
հետեւապէս իմ որդին էլ կարիք չունի»: Եթէ
համոզւած լինէինք, որ ապագայում գիւղատն-
տեսութիւնը ալիս նոր քայլեր չէ անելու, գու-
ցէ կարելի էլ թոյլ տալ, որ գիւղատնտեսու-
թեան ուսուցում էլ կարող է կանգ առնել.
բայց միթէ հնարաւոր է այդ: Լինում են նոյն-
պէս ծնողներ, որոնք ասում են՝ «Մենք չենք
կարող գպրոց ուղարկել մեր որդուն, որովհետե-

նա արդէն աշխատող ձեռք է և մեզ օգնում է. առանց նրա մենք չենք կարող կատարել բոլոր գործը, թէկուզ մի բանի ձմեռայ լնվացրում։ Սակայն չէ որ այդ ծնողները զրկւած էին իրանց որդու «ձեռքից», եթիւ սա գետ անշափահաս էր։ Մեր կարծիքով, ոյժնիսկ սուղ միջոցներ ունեցող ծնողները պիտի ոչինչ ջանք չը խնայեն՝ իրանց որդուն լաւ պատրաստելու համար, այդ նրանց բարոյական պարտաւորութիւնն է։ Հատ հողագործներ կան այսօր, որոնք ցաւելով են խոստովանում, որ իրանք ուղղակի շւարած են ժամանակակից նորամուծութիւնների առաջ, և այդ բանը կըթութեան բացակայութեան հետեանքն է։ Նրանց ջահիլ օրերը ապարդիւն են անցել, ովք է մեղաւոր, իրանք թէ ծնողները՝ այդ երկրորդական հարց է։ Ուրեմն, ընթերցող, աշխատեցէք տալ ձեր որդիներին՝ կեանքի մէջ կոիւ սղելու լաւագոյն միջոցը—մի հիմնաւոր, սասնազիտական կըթութիւն, որը բոլոր նիւթական զանձերից աւելի արժէք ունի. գանձը կարող է ցեցի ու ժանզի կերպակուր զառնալ, կամ թէ գողերի ձեռքն ընկնել, իսկ մտաւոր կապիտալը կը մնայ և միշտ էլ շահ կը րերէ։ Եթէ դուք որսչէք մասնագիտական կըթութիւն տալ ձեր որդուն, ապա արէք այդ բանը առանց ուշացնելու, հինգ որ նրան արձակեցին տարրական դպրոցից. առայժմ նա չի մտածիլ, թէ իր աշակերտական տարեցրանը անցած է,

նա դեռ չէ ընտելացիլ գործնական կեանքի
նիստ ու կացին. դեռ չի շպըտել ընթերցանու-
թեան գիրը, դեռ չի արհամարել գրելն ու կար-
դալը, նա դեռ արժէք է տալիս իր սովորած-
ներին և տրամադիր չէ յետադիմելու. չ՛որ նա
էլ, ինչպէս ամեն սարդ, ունի իր որոշ փառա-
սիրութիւնը: Եթէ մի հայր լուրջ կերպով կա-
մենայ հմանական կրթութիւն տալ իր որդուն,
միջոցները գետնի տակից էլ կը գտնի, հանգա-
մանքները կը սկսեն յարմարւել նրա վճռական
կամքին: նոյնպէս թող ոչ մի հայր չըկարծէ, թէ
դպրոցական տարեշրջանը կը սառեցնի իր որ-
դուն գործնական աշխատանքից: Երկրագործա-
կան դպրոցում նա կարող է թէ ուսանել և թէ
գործնական աշխատանքներով զբաղւել, թերևս
նորագոյն եղանակներով: Կամ թէ, չէ որ ձմե-
ռային ուսումնարաններում կրթութեան համար
յատկացնում են գործազուրկ ամիսները, և ամա-
ռը կարող է աշակերտը կրկին գործնական աշ-
խատանքներին ներիւել: Եւ որքան նպաստաւոր
ներգործութիւն կանի երիտասարդ գիւղատնտե-
սի կրթութեան ու դաստիարակութեան ընթաց-
քի վրա՝ աշխարհ տեսնելը. որքան անհրա-
ժեշտ է այս բանը նրա աշխարհայիշեցքի ու
մտաւոր հօրիգօնի ընդարձակման վրա, մանա-
ւանդ որ նրա ապագայ գործունէութիւնը այն
տեսակի է, որ ինքը հազիւ է կարողանալու
տունուտեղից հեռանալ:

Ինտէլլիգէնցիան և հասարակութեան ղեկավար շըզանները պիտի չը բաւականանան միմիայն գիւղատնտեսական դպրոցների հիմքը դնելով, այլև պիտի աշխատեն գրքեր պատրաստել՝ մասնագէտների ձեռքով, պիտի ոչ մի ծախս չը խնայեն՝ դպրոցներին մատակարարելու համար լու շէնքսեր, պիտանի ուսուցիչներ, բազմատեսակ գիտուական միջոցներ, գրադարաններ, փորձնական դաշտեր, և այսպիսով պիտի օգնութեան գան գիւղական հառայնքներին, որոնք ճիշտ են ծանր հարկերի տակ։ Սա բարյական պարականութիւն է. դպրոցների գասագն սուր բնականաբար աննշան պիտի լինի, դասպարերը պիտի գումարով ձեռք բերեն, որպէսզի ծախսը հասնի մինիմումի. Միջոցներից դուրկ աշակերտներին պէտք է ստիպենդիա տալ, որ յետ չը մնան դպրոցից։ Եւ այս բոլորից յետոյ մնում է, որ գիւղացին երախտապարտ սրտով օգտւի դէպքից և իր որդիներին ուղարկի գիւղատնտեսական դպրոց, որպէսզի հետաւորին շափ շատերը բա կարելոյն շատ բան ուղարկին՝ իրանց կոչմանը վերաբերեալ, և այսպիսով բարգաւաճէ մեր երկրի տնտեսութիւնը՝ յօգուտ անհատի ու հայրենիքի։

Իմ ընտրած նիւթը այստեղ իսկապէս կարող էր սպառւած համարւել։ Բայց ես կամինում եմ համառօտ կերպով սի գորեզ փաստ ներկայացնել ընթերցողի առաջ, մի ապացոյց տալ

այն մասին, թէ ինչ կարող է անել ինտէլլիգէնցիան, եթէ բարի կամք ունենայ։ Օրինակը պիտի վերցնեմ ոչ թէ լայնատարած Ռուսաստանից, այլ մի մոքքիկ երկրից, խօսքս Դանիային է վերաբերում, որի ներկայ գիւղատնտեսական դրութիւնը կարող է իդէալ լինել իւրաքանչիւր ժողովրդի համար։

Դանիան մի շատ փոքրիկ պետութիւն է, ոչ աւելի միծ, քան Ռուսաստանի որեւէ մի նահանգը։ Ազգաբնակութեան թիւն է ընդամենը $2\frac{1}{2}$ միլիոն, «Պատիկ է, բայց շատիկ է», ասում է առածը։ Սա մի գիւղական դրախտ է։ Մի երկիր, ուր հազիւ կը գտնէք միծ քաղաքներ, բայց շատ ու շատ կը գտնէք գիւղական հարուստ տներ։ Մի երկիր, ուր երկրագործութիւնը, անասնապահութիւնը, թուչնապահութիւնը օրինակելի հիմքերի վրա է զրւած։ Եղջիւրազը կենդանիների թիւը հասնում է $2\frac{1}{2}$ միլիոնի։ Խրաբանչիւր տարի 5 միլիոն փութ իւղ է արտահանում Անգլիա, և այդ իւղը Անգլիայում ամենաընտիքն է համարւում և ամենաբարձր գրնով ծախսում։ Միս ու մսացու կենդանիներ արտահանուում է Դանիայից 20 միլիոն ըուբլու, իսկ ձու՝ տւելի բան 2 միլիոն ըուբլու։ Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ խրաբանչիւր դանիացի միջին հաշւով ունի խնայողական գանձարաններում 135 ըուբլի, մինչդեռ Փրանսիայում այդ թիւը հասնում է 40 ըուբլու, իսկ

Առևսաստանում միմիայն 7 ըուբլու։ Ուրեմն զանիացին յետաձգում է սև օրւաւ համար $3\frac{1}{2}$ անգամ աւելի քան ֆրանսիացին, և 20 անգամ աւելի քան ոռուսաստանցին։ Դանիայի ազգաբնակութիւնը փոքր է ոռուսականից 52 անգամ, բայց նրանից հարուստ է 22 անգամ։ Եւ այդ բոլոր հարստութիւնը դիզել է դանիական գիւղացին իր հողի մշակութեամբ, իր հալալ աշխատանքով։

Եւ ուժից պիտի օրինակ վերցնէ մեր խաւը, աղքատ, քաղցած, կիսակենդան գիւղացին, եթէ ոչ դանիական գիւղացուց։ Վերջինս կուշտ է և ապահով, իսկ մեր գիւղացին ոչ միայն զուրկ է մարդավայել ապրուստից, այլև չը գիտէ, թէ ինչպէս պիտի երբեք հասնէ նրան, և իսկի չի էլ հաւատում, որ գիւղացու համար հնաբաւոր է կարգին ապրուստը։ Ուստի անհրաժեշտ է՝ ակներե շոշափելի փաստերով համոզել նրան, հարկաւոզ է ներշնչել գիւղացուն, որ հողը ոչ թէ խորթ, այլ հարազատ մայր է, որ այդ բանը առասպել չէ, այլ անհերթելի ճշմարտութիւն է, այն ժամանակ նա ինքը կը ցանկանալ իմանալ, թէ ինչ ճանապարհով են առաջ գնում ուրիշները, և ինքն էլ կը դնայ նոյն ուղղութեամբ։ Բաւական չէ աւանդել գիւղացուն գիւղատնտեսական գիտութիւնը, այլ պէտք է նրա սրտում հաւատ զարթեցնել գէպի այդ գիտութիւնը, որպէսզի ն ո դիտակցէ այդ գիւ-

տութեան անհրաժեշտութիւնը։ Հարկաւոր է փոքր ինչ ինքնափսաւահութիւն ներշնչել նրան, հասկացնել, որ գիւղացիութիւնը պիտի իր ոտների վրա ամուր կանգնի, ինչպէս կանգնած են Դանիայի, Նոր-Զէլանդիայի և Կանադայի գիւղանիայի, երբ վերջիններս կը տեսնեն, թէ ինչ հրաշճներ է գործում դաշտերի բարելաւած մշակութիւնը, թէ ինչ նշանակութիւն ունի արհեստական պարարտացումը, ինչպէս կարելի է ընկերութիւններ ըարտագումը, ինչպէս կարելի է ընկերութիւններ ու մատչելի վարկ կազմակերպել, իրանք էլ կաշխատեն նմանւել, եկել է ժամանակը ըմբռնելու, որ եթէ գիւղացին, ինչպէս և ամբողջ աշխատաւոր ժողովուրդը կըթւի, նա աւելի մեծ արգիւնք կը բերէ ընդհանրութեան համար։ Գիւղացին ու կալածատէրը, ինչպէս և պաշտօնեան ու բանւորը, փաստաբանն ու վաճառականը, զրողն ու գեղարւեստագէտը—հաւասարիրաւոնք ունին՝ կուլտուրական բոլոր բարիքներին մասնակցելու։

Անհրաժեշտ է որ ժողովուրդը կանգնի իր սեպհական ոտների վրա, չը ճխլի հոգսերի տակ, պէտք է որ աշխատաւորը հասկանայ գիտութեան արժէքը և կարողանալ ձեռք բերել նրան առանց մեծ դժւարութեան։ Վերջապէս ամենաառանց միտքը, կառու խնդիրը, պահանջում է թէ առողջ միտքը, կառու խնդիրը, պահանջում է թէ

լվաճառականից, թէ զործարանատիրոջից, թէ
կալւածատիլից, որ գիւղացին շը մուայ ալիս
«հանգամանքների խաղալիք», որպէս մի կոպիտ
յանորական կոյր ոյժ, այլ դառնայ հողի ու
մարգի, հացի ու իւղի, գիտակից, բանիմաց զեղ-
արևեստագէտը ու ստեղծագործողը:

Բայց անցնենք Դանիայի օրինակին:

Դանիայի տնտեսական վերածնութեան
շրջանը սկսւեց 1864 թիւն, մի անյաջող պատե-
րազմի վերջանալուց յետոյ, երբ երկիրը կորց-
րուեց իր հողի նշանաւոր մասը և իր որդիներից
շատերին: Վիշտը մեծ էր մանաւանդ այն պատ-
ճառով, որ այսպիսով Դանիան դարձել էր այլիս
մի չնշին պետութիւն՝ եւրոպական հսկայ պե-
տութիւնների շարքում: Դանիական ազգասէրի
համար պարզ էր, որ Դանիան այժմ միմիայն
մէկ միջոց ունի՝ իր նախկին դիրքը վերականգ-
նելու համար—անհրաժեշտ է զարգացնել երկ-
րի ներքին ոյժերը և այսպիսով կորուստը յետ
ուտանալ: Երկրի աշխարհագրական դիրքը նպա-
ստաւոր էր տնտեսական տեսակէտից: Պէտք է
ծայրայեղ ջանքեր զործ գնել և քաղաքների ա-
ռևստուրը վերակինդանացնել: Եւ իսկապէս, Կո-
պէնհազէն մայրաքաղաքի նաւազնացութիւնը
հասցըին արտաքոյ կարգի զարգացման և ներ-
կայումս էլ գեռ շարունակում են աշխատել
նոյն ուղղութեամբ: Խոկ երկրի ներսում, զաշ-
տավայրում, կարելի էր յոյս գնել միայն երկրա-

դործութեան վրա՝ այս պատճառով հարց ծա-
գեց, թէ ինչպէս բարելաւել գիւղացու զբու-
թիւնը: Ամբողջ ժողովուրդը սաստիկ ոգևորւած
էր այս գաղափարով: բազմաթիւ ընկերութիւն-
ներ կազմեցին՝ բոլոր մեծ գիւղերում բարձր
դպրոցներ բացելու համար: Դանիական գիւղացին
իւրացրել եր այն միտքը, որ գիւղացու մշաւոր աստիճա-
նի բարձրութիւնը եւա տնտեսական առաջադիմութեան
ամենավստահելի հիմնաբարն է եւ ապահով պատան-
տանը: Կառավարութիւնն էլ վազօրօք կարողա-
ցաւ օգտւել ժողովրդի տարրերային ովկորու.
թիւնից՝ երկրի վերածնութեան նպաստելու հա-
մար, նա նշանաւոր գումարներ յատկացըց՝
տելի բարձր ժողովրդական դպրոցներ հիմնելու
և ամենից առաջ՝ լաւ ուսուցչական ոյժեր պատ-
րաստելու համար: Փոքրիկ պետութիւնը գոր-
ծազրեց ժողովրդական դպրոցների վրա՝

| | | | | | |
|---------|---|---|---|---------|------|
| 1895—96 | . | . | . | 23,000 | մարկ |
| 1898—99 | . | . | . | 90,000 | » |
| 1902 | . | . | . | 110,000 | » |
| 1904 | . | . | . | 160,000 | » |

բոլորն էլ, ինարկէ, ընդհանրութեան հաշւին,
մի գումար, որ յետագայում աւելի ևս աճեց:

Դանիայի ժողովրդական դպրոցները միջին
տեղն են բունում գերմանական գիւղական ու-
սումնարանների և Զմեռային գիւղատնտեսական
դպրոցների մէջ: Բայց երկու բան առանձնա-
պէս աշքի է ընկնում: Մի կողմից, շատ լուրջ

ուշադրութիւն են գարձնում բնապատմական կրթութեան վրա, յատկապէս շեշտելով գիւղական յարաբերութիւնները, առանց հեռանալու բնագիտական հիմունքից, և միաժամանակ՝ առանց ձգտելու հաւասարելի բուն գիւղատնտեսական դպրոցների հետ։ Միւս կողմից, աշակերտներին աւանդում են ընդհանուր կրթական առարկաներ, և առեն բանից առաջ աշխատում են վառ պահել նրա սրտում հայրենիքի սէրը, ծանօթացնելով աշակերտներին նշանաւոր մարդկանց կենսազրութիւնների հետ։ Ահա այն երկու գործօնները, որոնցով ժողովրդական դպրոցներում ներգործում են մատաղ սրտերի վրա։ Դանիական գիւղատնտեսութեան ընդհանուր ծաղկման պատճառները տարբեր անձնաւորութիւններ, տարբեր տեղերում միաբերան նոյն խօսքիրովն են բացատրում «Դանիական ծողովուրդը պարտական է այդ՝ 1864-ից սկսած գիւղական դրագուների միջոցով ազգաբնակութեան կրթական մակարդակի բարձրացման»։

Վերոյիշեալ գործունէութեան արդիւնքը շատ նշանաւոր եղաւ՝ ազգային վերածնութեան տեսակէտից։ Արդիւնքը արտայայտում է նաև և առաջ այն փաստի մէջ, որ Դանիան մեծ քանակութեան հպացրեց գիւղատնտեսական որոշ միերքների արտահանութիւնը. սրանց թւին են պատկանում, ի միջի այլոց, իւղը ու ձուն։ Նոյն դրութիւնն է ներկայացնու ի խոզի մսի արտա-

հանութիւնը։ Դանիական ու գերմանական պայմանները համեմատելով գտնում ենք, որ Դանիան նոյնքան տոկոս ոչ—հողագործ ունի, որպահ և Դերմանիան։ Արդիւնահանական պայմանների տեսակէտից նոյնպէս Դանիան չէ դրտնւում աւելի նպաստաւոր գրութեան մէջ, քան Գերմանիան։ Այսուամենայնիւ շոշափելի կերպով գերազանցում է Գերմանիային՝ կարեոր առարկաների արդիւնաբերութեան մէջ։ 1903 թւին, Դանիան աւելի վաճառահանել է, իսկ Գերմանիան աւելի ներմուծել մարդագույն հաշւած՝ գերմանացի և ներմուծութեան առեւտութեան ունեւութեան գերմանացի և ներմուծութեան առեւտութեան ունեւութեան։

| | | | | | |
|----------|----|-------|---|------|-------|
| իւղ | 45 | մարկ. | — | 0,40 | մարկ. |
| Զու | 6 | » | » | 2,00 | » |
| Խոզի միս | 22 | » | » | 0,64 | » |
| Գունար | 73 | մարկ | — | 3,04 | մարկ |

Դանիական գիւղացիները իրանք էլ հաւասար նշանաւում են, որ յիշեալ առարկաների արդիւնահանութիւնը վերջին տամնամեակներում սաստիկ աճել է, և որ այդ աճումը պէտք է ամրողացնին վերապրել գիւղացու սասաւոր առաջադրիմութեան։ Մենք էւ իհարկէ, կատարելապէս համաձայն ենք այն տիրապետող կարծիքի հետ, որ գիւղական ազգաբնակութեան իմացականութեան բարձրացումը՝ արդիւնաբերական ոյժի կամաց ազգութեան լծակն է։ Դանիական գիւղատնտեսութեան բարձրացումը, ի միջի այլոց, իւղը ու ձուն։

պացուցանում է այն ճշմարտութիւնը, որ արդինաբերութիւնը ծաղկեցնելու գործի համար նշանակութիւն ունեն ոչ միայն խոշոր տնտեսութիւնները, այլև սովորական գիւղացի հողատէրը և առհասարակ ամբողջ գիւղացիութիւնը: Բացի այդ, դանիական գիւղը ապացուցեց, որ գիւղական դասակարգի իմացականութիւնը կարելի է բարձրացնել համեմատաբար հեշտ ճանապարհով՝ տալով գիւղացուն մի լրացուցիչ ուսում, ժողովրդական դպրոցի տւած տարրական կրթութիւնից յետոյ. Անհրաժեշտ չէ բոլոր գիւղերը լցնել գիւղատնտեսական ուսումնաքաններով. բաւական է, որ իւրաքանչիւր շրջան ունենայ մէկ կամ միքանի ուսումնաբաններ, եթէ միայն հնարաւոր է բոլոր գիւղերում ունենալ կարգին սկզբնական դպրոցներ: Այստեղ խօսքը դուռ թէօրիթիքական անմարս գիտութեան մասին չէ, այլ այն հասուն պտուղների, որը դանիական պատրիօտիզմը և նրա հետ միասին դանիական գիւղատնտեսութիւնը կեանքի. կանաչ ծառից պոկում են:

Մեր երկրագործների համար գլխաւոր բանն այն է, որ տնտեսական մըցութեան ասպարիզում յետ շման ուրիշ երկիրներից, այլ առաջ գնան, օրինակ վերցնելով ուրիշներից, մանաւանդ Դանիայից: Հայ երկրագործները յաւ անուն ունեն իրանց օտար վիճակակիցների մէջ, թէ և իրապէս շատ են յետ մացել: Նրանց գործը

պիտի լինի ուրեմն՝ անընդհատ առաջադիմելով այսպահնել այս բարի անունը, իսկ այդ բանը հնարաւոր է՝ գլխաւորապէս դպրոցներ հիմելով:

Այս բոլորը ի նկատի առնելով պէտք է աշխատել, որ Կովկասում մտցնեի կրթութեան պարտաւորիչ սիստեմը՝ գլխաւորապէս գիւղական լրացուցիչ դպրոցի ձևով: Ի հարկէ, այստեղ ու այնտեղ ոգեւորութիւն է նկատում՝ բարձրացնելու գիւղատնտեսութեան իմացականութիւնը՝ լրացուցիչ ուսումնաբաններ հիմնելով: Բայց մեր երկրում գիւղական և թէ առհասարակ, ուսումնաբանների գործը, դրած ոչ—պարտաւորիչ հիմունքի վրա, կարող է միայն դանդաղ զարգանալ, ուստի և չէ կարող աբագութեամբ ներգործել ժողովրդի կրթութեան վրա, որպէս օրինակ Գերմանիայում Հէսսէնի շրջանի պարտաւորիչ լրացուցիչ դպրոցը, որին մենք պիտի նախանձենք և դէպի որը պիտի ձգտենք, եթէ կամենում ենք Կովկասում գործի առաջնորդը լինել այդ ասպարիզում: Ի հարկէ, այդ էլ կինք միայն այն դէպրում, եթէ կարողանանք գոհացուցիչ կերպով կազմակերպել լրացուցիչ ուսումնաբանները: Պրուսսէան, նոյնիսկ իր գեղեցիկ նահանգներում (նասսաուի և Ռէյնլանդի) միայն այնտեղ է հասցընել, որ գոնէ առանձին համայնքների համար հնարաւոր դարձնէ՝ գիւղական լրացուցիչ ուսումնաբանների պարտաւորիչ յա-

ճախումք. Հեզ Պրուսսիան գոնէ զասընթացքներ է հիմնում զիւղական լրացուցիչ ուսումնարանների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակ. այսպէս: Հետո մասին աւելորդ շեմ համարում նկատել, որ անտեղ մեծ նշանակութիւն են տալլս այն բանին, որ նոյնիսկ հոգեորականները սնցած լինեն զիւղասնտեսական զասընթացքը որեէ մասնազիտական զպրոցում: Պրուսսիայում նոյնպէս հոգեորականները մեծ հաճութեամբ են մասնակցում երկրագործական աշխատանքներին, և քաղաքատնտեսական խնդիրներին:

Տարաբագդաբար մեզանում զիւղական ազգաբնակութիւնը դեռ չէ հասկացել պարտաւորիչ կրթութեան նշանակութիւնը. միւս կողմից, այս ու այն շրջանում զանդասներ են լրում, թէ հողագործութիւնը գտնուում է ճնշած ու լնկած դրութեան միջ, ուստի և զիւղական բանութեան ստիպւած են լինում մեծ թուփ զաղթել զէպի քաղաքները: Ցաւով պէտք է նըկատել, որ այդ կորստարեց «Փախուստի» պատճառու գլխաւորապէս անուղակի կամ ուղղակի հարկելն են, որոնցով ծանրաբեռնւած է զիւղացին: Քանի որ ձայները ըոլոր կողմերից են լրուում, պէտք է պատճառները բնել և աշխատել շարիքը ուղեկի: Գիւղական զպրոցի զէմ եղած հակառակութիւնը միայն նրանով կարելի է բացատրել, որովհետեւ նըսնը շեն ազդել ազգանակութեան իսացականութեան վրա, հակա-

ոակը պէտքում ներգործութիւնը հետեանք կունենար, այսինքն զպրոցի թշնասիները բարեկամ դարձած կը լինէին:

Եւ իսկապէս, զպրոցի զէմ լուող զանգատների հիմքը պէտք է որոնել այն հանգամանքի մէջ, որ այդ գործունչութիւնը անզիտակցական է եղել: Բայց տալրածայնութիւնները կը վերանան, հինգ որ ձեռք կառնին իրական միջոցներ, այսինքն զիւղական զպրոցի համար կը կազմեն մի նոր, իսկապէս արդիւնաւոր ծրագիր: Եւ ահա մեր կառավարութիւնը և առասարակ ժամանակից դրութիւնը, հարթել է ճանապարհը, ընդունելով այն սկզբունքը, որ զպրոցը պիտի ի նկատի առնէ իր սաների յետագայ կոչումը:

Մի զեղեցիկ ու վսիմ երեսլի է, որ մեր անտեսական լնկերութիւնները, որոնց նըպատակը ոմանք կուցէ սիայն զիւղասնտեսական զործածութեան գուտ տեխնիկական զարգացումն են համարում, իրանց ցոյց տիխն զոհաբերելու պատրաստ՝ նպաստելու համար մի հիմնարկութեան, որի ծախսերը սովորաբար անում են պետական կամ թէ մասնաւոր համայնական միջոցներից, և որի կազմակերպութիւնը սիայն անուղղակի է շահ բերում զիւղասնտեսական զործին: Սրանով մի նոր ապացոյց տրւեց, որ մեր կովկասեան շրջանում թագնւած է մի ուրախալի և շատ նշանաւոր քանակութիւն իդէա-

լիզմի և մեծահողութեան, միայն թէ մարդ կարողանայ զարթնեցնել և շահեցնել այդ գեղեցիկ յատկութիւնները։ Նիւթական միջոցներ հայթայթելուց յետոյ արդէն կարելի է ապահովւած համարել զանազան դասընթացքների գործը և սրա հետ միասին գիւղատնտեսական կամ լրացուցիչ զպրոցի հիմնելու գործը։

Այս խնդիրը ինքն իրան կ'արծարծւի և իր յաջող լուծման կը մօտենայ։ Իսկ այժմ մենք կանգնած ենք մեր պարտականութիւնների մի աւելի մեծ և բնդարձակ խնդրի առաջ, այն է՝ բարեկամներ ձեռք բերել ամբողջ Կովկասում՝ հանրաշահ գործը գլուխ բերելու համար, և ամեն տեղ հետաքրքրութիւն զարթնեցնել մեր դըրած հարցի լուաբանութեան համար։ Ամեն մի լաւ բան ժամանակ է պահանջում, և մենք ստիպւած ենք և կարող ենք հանգիստ սրտով սպասել, որ նա արծարծւի, զարգանայ։ Հարթ ճանապարհի վրա կանգնած անիւր, առաջին զարկը ստանալուց յետոյ ինքն իրան պըտում է։ Իմ գրքոյկի նպատակն է՝ միանգամընդմիշտ պարզապանել, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի գիւղատնտեսական ուսումնարանը Կովկասեան գիւղացիութեան մտաւոր ու տնտեսական առաջադիմութեան համար, և գիւղացիութեան հետ միասին տոհասարակ բոլոր այն մարդկանց համար, որոնք կապ ունեն երկրագործութեան, անտառապահութեան, այդեւա-

նութեան և գինեղործութեան և այլ գիւղատնտեսական ճիւղերի հետ։ Ինչպէս մարմնամարզութիւնը զարգացնում և ուժեղացնում է մեր մարմինը, այնպէս էլ գիւղատնտեսական զպրոցի մտաւոր մարմնամարզութիւնը՝ աշխոյժ և ընդունակ է զարձնում գիւղացուն՝ կեանքի կուի մէջ լաւ գինւած զիմադրութիւն ցոյց տալու համար։ Մըա վրա աւելանում է գիւղատնտեսական զպրոցի դաստիարակչական ներգործութիւնը, նա ձգտում է զարթեցնել սէր դէպի հայրենիքը, և սէր դէպի երկրագործութիւնը և դրական իմացականութիւնը։ Մըանք նաև և առաջ իդէալական ձգտումներ են, բայց սըանց իրականացնելով, մենք կարող ենք միանգամայն վստահ լինել, որ մեր երկրի տնտեսական ոչքը և արդիւնաբերութիւնը անսպասելի կերպով կը զարգանայ, ինչպէս ցոյց է տւել Դանիայի օրինակը։

Ամբողջ գործը պէտք է այնպէս ծըրագրել ու կազմակերպել, որ կարողանայ գլուխ գալ նոյնիսկ սահմանափակ միջոցներով, ինչպէս Դանիայի օրինակը շոշափելի և գործնական կերպով տպացուցեց, հէնց փոքրիկ երկիրներն են, որ կըկնակի առիթ ունեն՝ իրանց դիրքը վերականգնելու համար զարգացնել երկրի տընտեսութիւնը՝ Խմացականութիւնը բարձրացնելով։

Բնական է, իհարկէ, որ գիւղական լրացոցի ուսումնարանների կամ ձեւացին զպրոցների

օգտին զօհաբերութիւններ անելը նախ և առաջ զիւղական և զիւղերի հետ կապ ունեցող շրջանների զործն է։ Ուղղակի մեր կովկասեան երկրագործութիւնն է, որ ամենամեծ շահը պիտի ստանայ՝ պարտաւորիչ լրացուցիչ ու ձմեռային դպրոցների նպատակալարմար կազմակերպութիւնից։ ուստի նրա մտաւոր պարտաւորութիւնն է աշակցել իր կողմից, որ սպառագրեֆօրմը իրականանայ։

Ոչ թէ գլխակորոյս շտապողութեամբ, ալլ
միայն հանգիստ ու խաղաղ բարձրացումով է
տեղի ունենում այս հարցի դարձացումը, ըստ
որում իւրաքանչիւր յաջորդ աստիճանը միշտ
իւր հիմքը դնում է նախորդի յաջող փորձի վրա,
միշտ սպասում են, որ նախ երեսն զայ զար-
զացման մի աստիճանի արդիւնքը, ապա թէ
ոկտում են մտածել հետեւեալ աստիճանի կազ-
մակերպութեան մասին:

Իմ ասելիքը վերջացած է։ Մի հին, բայց
միշտ էլ այրող հարց էր, որ ևս զրի ընթերցա-
ղի առաջ։ Ով ուշադրութեան առնէ այդ հարցը,
նա մեծ օգուտ բերած կլինի հայրենիքին, և ևս
իբոլոր սրտէ կը ցանկանայի, որ ամենքն էլ
այսպէս վերաբերէին։

Ես շատ երջանիկ կլինէի, եթէ ինձ վիճակւած լինէր՝ երբեք տեսնել, թէ ինչպէս է ծաղկում հայրենի հողագործութիւնը իր զպրոցի հետ միասին:

Իմ նպատակն էր ցոյց տալ, թէ ինչ է մեզ
անհրաժեշտ հողի մշակութեան ասպարիզում և
դեռ ինչ է մնում անելու: Թող ընթերցողը չը-
նեղանալ մռագանից, եթէ մենք բացարձակ ա-
սենք, որ մեզ հայերիս բոլորովին պատիւ չէ
բերում ոչ մի հատիկ գիւղատնտեսական մաս-
նագիտական դպրոց չունենալ նոյնիսկ քսանե-
սորդ դարում: Այո, ուրիշ երկրներից չափազանց
յետ ենք մնագած մենք: Մենք իսկական գիւ-
ղատնտեսութիւն չունենք մի այնպիսի ժամա-
նակ, երբ թէ գիւղատնտեսական և թէ բնական
գիտութիւնները բաւական բարձր զարգացման
են հասել: Մեզ շատ բան է պակասում մեր
հայրենիքի գիւղատնտեսութիւնը իր ընկած վե-
ճակից բարձրացնելու համար: Այս տխուր, բայց
իրական փաստերը ինտելիգենցիայի անգործու-
թեան մէջ չպիտի որոնենք միայն, և նրան մի-
այն մեղապարտի սեղանի առաջ բաշենք: Մեր
ինտելիգենցիան առհասարակ շատ քիչ է նւիր-
ւել գիւղի բարօրութեան գործին, մոռանալով
որ գիւղական դասակարգը պետութեան ուժեղ
սիւնն է: Թող ուրեմն գոնէ այսուհետեւ լուրջ ու-
շաղբութիւն դարձնենք գիւղի վրա: Լաւ է ուշ,
բան երբէք: Ուղիղէ նկատել գերմանական բա-
ղարագէտ զօրապետ Մօլտիէն «թէ միմիայն սե-
փական ոյժի մէջ է իւրաքանչիւր ազդի բաղդը»:
այս պատճառով ոչոք չպիտի զլանայ կատարել
իր հասարակական պարտաւորութիւնը: Այժմ

մեզ հարկաւոր է կազմակերպւել՝ դպրոցը գլուխ բերելու համար։ Այս բանը շատ վեր է անհատի ոյժից ու միջոցներից։ Իսկ եթէ հաստը կութիւնը տրամադրութիւն ցոյց կտայ՝ այս ուղղութեամբ զործելու, մենք էլ մեր կողմից համեստ ոյժերով յօժարութեամբ և ուրախութեամբ կանենք, ինչ որ կը կարողանանք. որ այդ ընդհանուր համերաշխ աշխատանքը մեր հայրենիքի գիւղատնտեսութեան օգտին պիտի ծառայի, դրանում ամենքս կարող ենք համոզւած լինել. Եւրախիւր անհատ, որ ձգում է՝ իւ մայրենի ծողովուրի սրտում զիտակցական սկը զարթնեցնել դեպի զիւդատութիւնը, սրանով արգեն ծառայում է հայրենիքին եւ նպաստում է իւ ծողովուրի բարօրութեան։

ტრԿՈՒԹ ԻՇՈՒՔ

„Ոչ մի գպրոցական կազմակերպութիւն չէ կա-
մող մշտատել լինել—ասութ է կէրչէնջաէյնը, —բաւա-
կան է, որ մենք մի քայլ առաջ դնելով, հեղտացնենք
առաջիկայ սերնդի գործը: Յետագայ սերունդները ու-
նենալու են ուրիշ կարիքներ և գտնելու են տնտեսա-
կան ու սօցիալական ուրիշ յարաքերութիւնների: մէջ.
բնական է, որ նրանք նորանոր պահանջներ են անե-
լու իրանց գպրոցներից: Որքան էլ Ֆիմարկութիւննե-
րը համապատասխան լինեն իրանց ժամանակի պա-
հանջներին, այնուամենայնիւ իւրաքանչիւր հիմնար-
կութիւնից կտրող ենք պահանջել, որ նա կանգնած
լինի իր ժամանակի բարձրութեան վրա, և մօտիկ ա-
պագայի համար առողջ զարգացման ճանապարհը
հարթէ՞:

ի՞նչ եղրակացութիւն կարող ենք անել այդ խօսքերից՝ մեր պայմանների վերաբերմամբ: Մեզ հարկաւոր է մեր գիւղական տնտեսութիւնը վերակազմել, բայց սրա համար նախ և առաջ անհրաժեշտ է ունենալ համապատասխան զպըոցներ, ուր տարիքաւոր աշակերտները սովորելու են գիտակցաբար վերաբերւել գէպի այն գործը, որ իրանք կատարում են գիւղական տնտեսութեան ասպարիզում: Մեր գիւղացիութեան այսպիսի կրթութիւնը պիտի մեր գլխաւոր նշանաբանը լինի. նա է բոլոր երկոյթների հոսանքի մէջ նկատ-

ւող անշարժ կէտը, քիւրեղացման կենտրօնը, որին
պիտի յարմարւի մեր կրթական ամբողջ զործը Աշա-
կերտների մտաւոր պաշարը և նրանց գործնական ըն-
դունակութիւնը պիտի փոխադաբար իրար պաշտպան
հանդիսանան՝ ոչ մէկը պիտի օդի մէջ կախւած չլինի,
այլ պիտի յինւած լինեն միմեանց վրա։ Մկդրնական
կրթութեան շարունակութիւնը ու լրացումը և մաս-
նագիտական զարգացումը պիտի ընթանան ոչ թէ ա-
ռանձին առանձին, այլ երկուսն էլ միասին իրար հետ
շաղկապւած։

Առանց գիտական լմբոնողութեան կատարւող
հողագործական աշխատանքը, երբ աշխատաւորը չէ
հասկանում, թէ ինչու է ինքը այսպէս կամ այնպէս
գործում, նման է այն ծառին, որը թէկ ինքը ապ-
րում է, բայց ընդունակ չէ ծաղիկ ունենալու և պը-
տուզ առաջացնելու։ Միւս կողմից, գիւղատնտեսական
գիտութիւնն էլ, եթէ կապւած չէ հողագործական գոր-
ծնական աշխատանքի հետ, նման է այն ծառին, որը
ծաղիկներ ունի, բայց անընդունակ է իսկապէս արժե-
քաւոր պտուղներ բերելու։

Որքան երջանիկ կը զգայինք մենք մեղ, եթէ
մեր լուսաբանութիւնները առիթ տային՝ մեր յարա-
բերութիւններին համապատասխանող մի գիւղա-
անտեսական դպրոց հիմնելու։

Ի՞ՆՉՊԻՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՒՈՐ

Լուրջ նայեցէք կեանքին՝
Մատչելի է նա ամենքին,
Յական քչերն են ըմբռնաւմ,

Թէ ինչ է նրա իմաստը,
Թէ ինչ արժէք ունի նոյնիսկ չնչինը...

«Փառւա»

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Մեր փոքրիկ երկրում հիմնելիք գիւղատնտեսա-
կան դպրոցի նպատակը պիտի լինի՝ աւանդել այն-
պիսի գիտելիքներ, որ աւարտողները կարողանան
գիտակցաբար վերաբերել դէպի իրանց տնտեսա-
կան գործունէութիւնը և հասկանալ իրանց բա-
ղաբացիական պարտաւորութիւնները։ Միաժա-
մանակ դպրոցը աշխատելու է ամրացնել աշա-
կերտների գլխում այն բոլորը, որ նրանք սովո-
րել են սկզբնական դպրոցում և աւելի ևս հար-
ստացնել նրանց մտաւոր պաշարը, այնպէս որ
նրանք վերջիվերջոյ ունենան մի բովանդակ,
լաւ իւրացրած ընդհանուր կրթութիւն։

Եյս դպրոցը պիտի ընդունեն միայն՝ այն
պատանիները, որոնք արդէն անցել են սկզբնա-
կան 4-ամեայ դպրոցի դասընթացը։

Դպրոցի դասաւանդութիւնը պիտի բոլոր

տեսակէտներից սերտ կապւած լինի մեր զիւ-
ղական տնտեսութեան պայմանների հետ։ Իսկ
այս բանը չնաբաւոր դարձնելու համար, հար-
կաւոր է որ դպրոցը ունենայ իր ձեռքի տակ
մի սեփական, թէկուզ համեստ, հողաբաժին՝
իր բոլոր պարագաներով, որպէսզի ուսուցիչնե-
րը կտրւած չլինեն գործնական տնտեսութիւ-
նից և կարողանան գործնականապէս հնահել
գիւղատնտեսութեան ասպարիզում անընդհատ
տեղի ունեցող առաջադիմական շարժումներին,
միշտ կանգնած լինեն ժամանեակի բարձրու-
թեան վրա, և իրանց անձնական հմտութիւննե-
րով աւելի ևս բեղմնաւորեն իրանց աւանդած
զասերը։

Սակայն դպրոցը չպիտի ունենայ բուն շա-
հագիտական ձգտումներ, և չպիտի իր աշա-
կերտներին զործածէ իրեն սոսկ մշակներ, կամ
թէ մասնակից անէ իր փորձնական աշխատանք-
ներին։ Եատ կարենը է, որ աշակերտները
գիւղատնտեսական դպրոց մանելուց առաջ մաս-
նակցած լինեն իրանց ծնողների տնտեսական
գործերին, որպէսզի ծանօթ լինեն հողագործի
տարբական աշխատանքների հետ։ Նո իմ դիտու-
դութիւններից այն եղբակացութեան եմ եկել,
որ գործնական տնտեսութեան հետ կապւած ու-
սումնաբանը ինքն իր սյժերով չէ կարող մի
գործնական տառն պատրաստել լանջսկիսի
դէպքում երիտասարդ աշակերտակարդ է նոյն-

իսկ սխալ սաղափար ստանալ բուն տնտեսա-
կան գործավարութեան մասին։

Աւելի ևս անչարմար ենք զտում աւսպիսի
անտեսութեան ասպարիզում, մանաւանդ նո-
րանոր փորձեր անելու ժամանակ, աշակերտիւ-
րի մասնակցութիւնը. սրա համար աշակերտին-
ը ուղղակի գեռ անպատճաստ են։

Դպրոցի յաջողութեան մի կարևոր պայ-
մանն էլ այն է, որ բոլոր ուսուցիչները մասնա-
գեներ լինեն, և դպրոցի ասպարէզը իրանց բուն
կոչումը համարեն և դպրոցից ստանան իրանց
պատշաճաւոր ապրուստը։

Ինչ վերաբերում է աշակերդաներին, սրան-
ցից էլ շատ բան է պահանջուում. աշակերտը
սիտի յետագյուտ լրացնէ իր զարգացումը
լուրջ բնթերցանութեան միջոցով։ ոչ մի ասպա-
րիզում այնքան թերումներ չկան որքան զիւ-
ղատնտեսութեան ասպարիզում։ սրա պատ-
ճառն այն է, որ շատ գիւղատնտեսներ դպրո-
ցից յետոյ չեն շարունակում առաջադիմել։ Այս-
պէս կոչւած «լուսաւորւած» կալածատէրերը
յաճախ ամենատարբական բաները պարզ չեն
հասկանում, և որ ամենացաւալին է, երեակոյում
են, թէ իրանք ոչինչ սովորելիք չունեն գրքե-
րիք կամ պարպերական հրատարակութիւննե-
րից։ Բայց այդ կարծիքը միանգամայն անհիմն
է. բան սովորել կարելի է իւրաքանչիւր մար-
դուց, երբեմն նոյնիսկ մի հասարակ զիւղակա-
լուց երիտասարդ աշակերտակարդ է նոյն-

նից, որը մեծ հմտութիւններ ու բնական խելք ունենալով, աւելի բան գիտէ, քան թէ այս ու այն մեծամիտ «կալւած առէրը»։ Ով աելնդհատ գէպի առաջ չէ ձգտում, նա անպայման յիտ է զնում և հետզհետէ դառնում է մի տիպիկ թերուու։ Այդ ասպարիզում կանգ առնելը՝ յետ զընալ է նշանակում։

Եթէ ուսուցիչները ու աշակերտները լուրջ վերաբերեն գէպի իրանց կոչումը, գործնական կեանքի մէջ շատ շուտով կերեայ գիւղատնաեսական դպրոցի դրական արդիւնքը։ Վաղուց հաստատւած ճշմարտութիւն է, որ կրթութիւնը միմիայն այն ժամանակ է կատարեալ շըհութիւն բերում, երբ դպրոցը և ընտանիքը գործում են ձեռք-ձեռքի բռնած։

Մեր առաջարկած դպրոցի դլխաւոր նպատակն է բացի ընդարձակ կրթութիւնից, ապագայ տնտեսին լսու կարելոյն ճշգրիտ ու խորագննին գաղափար տալ գիւղատնտեսութեան գլխաւոր առարկաների մասին, և այսպիսով աշակերտներին նախապատրաստել իրանց ապագայ կոչման համար, նրանց դարձնել՝ կոչումը սիրող ու գործին նւիշւած տնտեսներ։ Գիւղատնտեսական դպրոցի տւած ուսումը տեսական է (տէօրէտիկ), բայց պէտք է ոչ խիստ տեսական ուսումը, առանց վնասելու սրա գիտական բընաւութեան, պարզապանել ու լուսաբանել փորձերով ու պատկերացումներով։

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ԱՌԱՐԿԱՆ

Ես անձամբ այն կարծիքի եմ, որ այժմեան հանգամանքներում թէկուզ, ժամանակաւոր, մեզ համար ամենայարմարը՝ զիւղատնտեսական շմեռային դպրոցներն են, և նոյնպէս Լրացուցիչ դպրոցները՝ միայն թէ ըստ կարելոյն ընդարձակ ծրագրով։

Զմեռային դպրոցի նպատակն է՝ սկզբնական կրթութիւն ունեցող դեռահաս գիւղացիներին հասունացնել մտաւորապէս, աւելի լուսաբանելով նրանց արդէն սովորածը, ընդարձակելով նրանց մտաւոր պաշարը, որ նրանք ձեռք են բերել թէ սկզբնական դպրոցում և թէ կեանքի մէջ, և այդ պիսով նրանց ընդունակ դարձնել՝ յետագայում իրանց սեփական տնտեսութիւնը վարելու փորձով հաստատւած կանօնների հիման վրա։ Բայց որ առենապլխաւորն է՝ դպրոցը պիտի տայ նրանց հիմնաւոր գիւղատնտեսական կրթութիւն, սրանց հիմքը կազմող բնական գի-

տութիւնների հետ միսսին, որպէսզի նրանք
կարողանան լազողութիւն ունենալ իրանց բուն
կոչման, այսինքն գիւղատնութեան ասպա-
րիզում։ Մի ժամանակ՝ ոչ մի երկրում գոյու-
թիւն չունէին այսպիսի դպրոցներ, և իսկի պա-
հանջ էլ չէր զգացում։ Բայց այն ժամանակ
գիւղատնութեալան յարաբերութիւնները գեռ
շատ հասարակ էին և հողագործը առանձին
գիտելիքների ու մտաւոր նախապատրաստութեան
կարիք չունէր։ Այժմ ժամանակը վոխւել է։ Ազ-
գարնակութեան թւի աճելու պատճառով, սիրե-
քի նիւթերի պահանջը մեծացաւ, սրա համա-
պատասխան՝ զարգացան գիտութիւնը ու տեխ-
նիկան և այս բոլորի ազդեցութեան տակ կա-
տարելապէս կերպարանափոխեցին գիւղատնու-
թեալան յարաբերութիւնները։ Ուստի մեր ժա-
մանակ եթէ մի հողագործ կամենում է յետ շր-
մայ իր գործի մէջ, պիտի զինւած լինի բազ-
մատեսակ գիտելիքներով, որպէսզի ըմբռնէ նո-
րանար միջոցները և օգտէ նրանցից։ Ուրեմն
այլքա սկզբնական դպրոցի տւած ընդհանուր
կրթութիւնը միանգամայն անբաւար է։ Այժմ
անհամեշտ է ունենալ աւելի ընդարձակ ընդ-
հանուր զարգացում, և սրա վրա աւելացրած՝
տեսական ու գործնական գիւղատնութեալան
կրթութիւն։ Անա հինգ այդ պահանջին բաւա-
րութիւն տալու համար են կոչւած գիւղա-

տնտեսական դպրոցները։ Այս տեսակի մի հի-
մնարկութիւն է և Զմեռալին դպրոցը։

Յատկապէս Զմեռալին դպրոցի նպատակը
հետեւալն է՝

1) Լրացնել սկզբնական դպրոցում սովո-
րած առարկաների թերին, ի նկատի առնելով
զործնական կեանքի պահանջները ընդէանրա-
պէս և գիւղատնութեանը մասնաւորապէս։

2) Հիմնաւոր կերպով ծանօթացնել աշա-
կերտներին բնական ու տնտեսական օբյեկների
հետ, որպէսզի աշտկերտները կարողանան բա-
ցաւրել առօքեայ կեանքի ու տնտեսական աշխար-
հի երեսյթները՝ նրանց բնական պատճառներով։
այսպիսով կը կըթւե սաների միտքը ու գատո-
ղական ոյժը, կը զօրեղանաւ, նրանց կամքը,
նրանը կը սովորեն ինքնուրացնաբար մտածել և
կը սկսեն լուրջ կերպով սիրել թէ դպրոցական
և թէ զործնական աշխատանքը։

3) Ներշնչել նրանց հաստատ համոզմունք,
որ եթէ անտեսութիւնը առաջ տարւի կատարե-
լապործուած ու նպատակայաբարմար եղանակով,
գուտ արդիւնքը անպայման տւելի մեծ կլինի։
Սրա համար պէտք է հիմնաւոր կերպով ծանօ-
թացնել աշակերտներին հողակազմութեան, պա-
րարտացման զործի, անկարտնութեան անհա-
նապահութեան հետ և այն։

4) Ընտելացնել լուրջ աշխատանքին, կարգ
ու կանօնին և խելացի խնայողական։

5) Պարզել աշակերտի համար, թէ ինչ պարաւորութիւններ ունի նա որպէս քաղաքացի և որպէս մի գիւղական անտես:

Այս բոլորը իրականացնելու համար, անհրաժեշտ է, որ աշակերտները լուրջ վերաբերւոն զէպի զպրոցը և զասերին կանօնաւոր յաճախեն։ Որքան աւելի լինի այդ եռանդը, այնքան աւելի արդիւնաւոր կլինի զործը։ Անհրաժեշտ է և այն, որ զպրոց յաճախելու համար նախապէս երեք ձմեռ ի նկատի առնւեն։

Ըստանց այս պայմանների ամբողջ արդիւնքը կլինի միմիայն մի անխուսափելի քերուսուրիւն, որը շատ էլ մեծ բաղդաւորութիւն չէ, և նոյնիսկ աւելի վնասակար է քան օգտակար։

Բոլոր այն անհատները, որոնք նախանձախնդիր են Զմեռային դպրոցի գոյութեան, պիտի գիւղական երիտասարդութեան ուշադրութիւնը հրաւիրեն դպրոցի նշանակութեան և օգտակարութեան վրա։ Ճնողներն էլ իրանց կողմից պիտի չը խնայեն մի չնչին զասավճարը. ապագայում իրանց զաւակների ջնորհակալութիւնը կլինի Ճնողների լաւագոյն վարձատրութիւնը։

II.

ԴՊՐՈՑԻ ՆՃԱՆԱԲԱՆԸ ՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ,

Դպրոցը պիտի եր գլխաւոր ու շաղրութիւնը նախ և առաջ ենական կրթութեան վրա

դարձնէ, երկրորդական տեղ տալով բուն պրակտիկային, թէն, իհարկէ, հարկաւոր է աշակերտներին պարզ կենսալից լեզով սովորցնել, թէ ինչպէս պէտք է ապագայում գործադրել տեսութեան տւածը։ Պիտի տեղի ունենան հետազօտութիւններ, խիմիական տարրալուծումներ։ Թէն մեր հայրենի գիւղատնտեսութեան ասպարիզում զեռ նոյնիսկ ամենտարրական աշխատանքները բարուբւելու կարիք ունեն, բայց չպէտք է մռանալ, որ վերջին տասնամեակների ընթացքում ամբողջ եւրոպայում տեղի ունեցած գիւղատնտեսական մեծ առաջադիմութիւնը՝ զլիսաւորապէս բնական զիտութիւնների զարգացման արդիւնքն է։ Խսկական գիւղատընտեսական գործառնութիւններ պիտի հիմնած լինի հաստատուն բնագիտական փաստերի վրա։ Բնագիտական ուսումը պէտք է գործադրել կենքի մէջ և նպատակալարմար կերպով շահեցնել։ Երկրագործութեան տէօրիխան (տեսութիւնը) է ծառայում այժմ գործնականին որպէս մի կատարելապէս գոտանելի զէնք՝ բոլոր զժւարութիւններին ու արգելքներին յաղթելու համար։ Աւստի անհրաժեշտ է համապատասխան զպրոցներում զեռահաս երկրագործների համար միանգամայն մատչելի զարձնել գիւղատնտեսութեան գործառնութեան բոլոր պայմանների վիտութիւնը, որ կանօնաւոր հետազօտութեան արդիւնք է։

Թէե մենք այն կարծիքի ենք, որ կրթութեան գործի մէջ պէտք է միշտ խոլո տալ աւելորդ նիւթերից, պէտք է մնալ որոշ սահմանների մէջ, բայց միւս կողմից անհր սժեշտ ենք համարում, որ սովորելիք գիտութիւնները անցնեն ոչթէ թռուցիկ ու մակերևոյթական, այլ հաստատուն ու հիմնաւոր կերպով:

Դարձոցը պիտի բաղկացած լինի երեք զասատնից՝ մէկը պատրաստական, իսկ երկուսը մասնագիտական: Եւրաքանչիւր գասատան համապատասխան է մի կիսամեալ դասրնթացք, ուրեմն ամբողջ դասընթացքը անցնում են երեք կիսամեակում: Աշակերտների, ինչպէս և ծնողների, շահի համար ցանկալի էր, որ երեք կիսամեակները անմիջապէս միմիանց հետևէին, այսինքն ամառը դասերը չընդհատէին: Ընդհատումը որոշ չափի սառեցնում է աշակերտին, մի տեսակ խորթացնում է դպրոցից և կէս տարի հեռու մնալուց յետու նորից սկսելը փոքրինչ ծանր է լինում: Բացի այդ, կան առարկաներ, որոնց միայն առան է կարելի կանօնաւոր անցնել, ինչպէս, օրինակ, բուսաբանութիւնը: Այսուամենայնիւ, իհարկէ, պիտի հիմնաւոր ու բաւարար կրթութիւն ստանան և այն աշակերտները, որոնք ամառը ստիպւած են հեռու լինել դպրոցից՝ իրանց ծնողներին օգնելու համար: Այսպիսի աշակերտներին պէտք է թոյ տալ, որ դպրոցի դասընթացքը անցնեն երեք

ձմեռալին կիսամեակներում, ըստ որում դպրոցը պիտի աշխատէ, որ ընդհատման աննպատակ գիտեցութիւնը ըստ կարելոյն չնշին լինի և ձմեռալին դպրոցի լաւ կողմերը աւելի զօրեղ ներգործեն:

Մեր նկարագրած հանրօգուտ դպրոցը առանձնապէս նշանակութիւն ունի այն երիտասարդների համար, որոնք մտադիր են՝ ապագայում սեփական կամ հայրական տնտեսութեան մէջ գործադրել ժամանակակից գիւղատնեսութեան բոլոր միջոցները ու եղանակները: սրանք, միայն ժամանակի բարձրութեան վրա կանգնած լինելով, կը կարողանան դիմագրել այն հանգառանքներին, որոնք յաճախ վտանգի են ենթարկում ամբողջ տնտեսութիւնը:

Եւրաքանչիւր անհատ, որը դպրոցը աւարտելով կը խրացնէ ժամանակի ողին, շուտով կը տեսնէ, որ ոչպրոցում զործադրած ժամանակը տպարդիւն կորած չէ, այլ հարիւրապատիկ շահ է բերում իրան:

ԵՐԿ. Գ. I. ՈՒ Խ.

ԳՐԻՂԱՑՆՏԵՍՍԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԶԱՆԾՉԱՆ
ՏԵՍՍԿԱՆԵՐԸ:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ երբ մի դպրոցական սիստեմ գետ իր գարգացման շրջանումն է գտնւում, նրա էութեան մասին կա-

բող են գոյութիւն ունենալ միմեանցից տարբեր շատ կարծիքներ:

ծս կը նկարագրեմ այստեղ համառօտ կերպով գիւղատնտեսական դպրոցի բոլոր տեսակները, առանձնապէս ուշագրութիւն դարձնելով Լրացուցիչ և Զմեռային դպրոցների վրա: Երբ մենք ծանօթ կլինենք իւրաքանչիւր դպրոցի էութեան հետ, այն ժամանակ դժւար չի լինի՝ ընտրել մեր պայմաններին աւելի յարմարւողը:

Գիւղատնտեսական դպրոցների աւելի տարածւած տեսակները հետեւալներն են՝

1) Բարձր դպրոցներ.

2) Դիւղատնտեսական ուսումնարաններ.

3) Դիւղատնտեսական Լրացուցիչ դպրոցներ.

4) Դիւղատնտեսական Զմեռային դպրոցներ.

5) Մասնագիտական դպրոցներ.

6) Երկրագործական դպրոցներ.

1) Բարձր դպրոցներում ուսուցումը տեղի է ունենում սիստեմատիկաբար, ըստ որում ձգտում են անցնել մասնագիտական առարկաները լիակատար կերպով: Այս դպրոցներից ումանք նշանաւոր կալւածներ ունեն ձեռքի տակ:

2) Գիւղատնտեսական ուսումնարանները մի տեսակ ըէալական ուսումնարաններ են, ուր օտար լեզուներից մէկը անհրաժեշտ է համարւում: Նըրանք բացւած են զիսաւորապէս գիւղական ապահովւած խաւերի ու գիւղատնտեսական պաշ-

տոնհաների համար: Սրանք մեծ մասամբ գիշերօթիկ են և իրանց սաներին տալիս են միամեայ կամուռոր ծառայութեան իրաւունք:

3) Գիւղատնտեսական Լրացուցիչ դպրոցները համայնական, ուրեմն և գիւղական դպրոցների բարձր աստիճանն են կազմում, և պարտաւոր են լրացուցիչ կրթութիւն տալ 14—17 ամեայ պատանիներին՝ գործնական կեանքի, մասնաւորապէս գիւղատնտեսական ասպարիզի համար:

4) Զմեռային դպրոցները նոյնպէս լրացուցիչ դպրոցների նման նպատակ ունեն՝ պարաստել գործնական կեանքի համար սկզբնական դպրոց աւարտած աշակերտներին: Բայց որպէսզի գործը աւելի յաջողութիւն ունենայ, կանոնաւոր պարապմունքները յատկապէս ձըմեռուայ ամիսներն են տեղի ունենում, որովհետեւ այդ ժամանակ գիւղացիք շատ աւելի ազատ են լինում, քան թէ ամառը: Այս դպրոցները նոյնպէս գիշերօթիկ են:

5) Մասնագիտական դպրոցները գիւղատնտեսական դպրոցներ են թէրի ծըագրի համեմատ*) գիւղատնտեսութեան առանձին ճիւղերի օրինակ, զինեզործութեան, այգեբանութեան, կաթնատոնտեսութեան, գարեջրի և այսպիսի բա-

*) Սրանք պիտի աւելի գործնական քան տեսական դպակեր տան, և այս պատճառով պիտի միացած լինին որևէ մեծ կալւածքի հետ,

ների համար: Աբանք զիշեթիկ են և նշանաւոր հողաբաժիններ ունին:

6) Երկրագործական գպրոցները միացնում են տեսութիւնը գործնականի հետ, և լիովին համում են իրանց նպատակին: Ավասառ միայն, որ նրանք մի քանի տարով հետացնում են երիտասարդ գիւղացուն իր հայրական տնտեսութիւնից: Այս գպրոցների թիւը նոյնպէս գիւղահանափակ է, այնպէս որ շատ քչերն են կարողանում լաճախել այնտեղ: Երկրագործական գպրոցի սաները մանր ու միջակ գիւղացիների շրջանից են: Եւելի ընդարձակ ընդհանութունը կըթութիւնից հրաժարած աշակերտներին, որոնք սակայն սկզբնական գպրոցը անցել են, երկրագործական գպրոցը ուժեղացնում է նրանց սովորածի մէջ, և ընդարձակում նրանց պաշարը, յետոյ էլ մանրազնին կերպով ծանօթացնում է նրանց ընական ու գիւղատնտեսական գիտութիւնների հետ, ու այսպիսով գիւղացի երիտասարդներին ընդունակ է դարձնում իրանց կոչման ասպարիզում յաջողութեամբ գործելու:

Օրովհետեւ մենք մեր գիւղական յարաբերութիւնների համար ամենայարմարը համարում ենք Երացուցիչ և Զենոպային գպրոցները, ուստի այս երկուսի վրա աւելի մանրամասն կանգ կառնենք:

Կենդանական բույր արարածների շրջանում

ընդհանուր օրէնք է, որ հասակաւոր սերունդը հոգում է մատաղ սերնդի համար: Որքան բարձր է կանգնած կենդունական ցեղը զարգացման աստիճանի վրա, այնքան աւելի է նրա հոգացողութիւնը իր ժառանգների համար: Հարկաւ այդ հոգացողութիւնը բարձրագոյն աստիճանի է հասնում մարդկային ցեղի մէջ, երեխան իր ծննդեան ըոպէից սկսած կարօտ է ծնողների խնամատարութեան և այդ շարունակուում է մինչև որ փոքրիկը մեծանալով զառնում է մի լիակատար երիտասարդ, որը արդէն կարող է ինքը իր կեանքի ու գործունէութեան համաց պատասխանատու լինել:

Երեսակայեցէք ձեզ մի ճանապարհորդ, որ տուածին անկամ ոտք է զնում մի երկիր, ուր զտնում է օտար լեզու, օտար բարը ու վարը, օտար սովորութիւնները, Այդ նոր երեսոյթները ամրողջովին զբաւում են նրա ուշադրութիւնը, երեկոն միան մտարերում է նա իր սիրուն հայրենիրը թախծութեամբ, բայց առհասարակ նոր տեսարանները ախորժանը հն պատճառում նրա սրտին, այնպէս որ նոյն իսկ զիշերը երազի մէջ նորովում են ցերեկւայ աեսածները ձիշտ այսպիսի զրութեան մէջ է լինում իւրաքանչիւր երիտասարդ, երբ նա իր համար մի որոշ կոշում է ընտրում: Նոր ասպարիզի պայմանները նրա համար օտարութիւններ են, հետեւալիս երիտասարդի ստացած տպաւո-

բութինները լինելու հն շատ խոր ու զօրեղ, մանաւանդ եթէ նա նւիրւած է իր կոչման, որ ինքն է յնարել աղատ կամրով: Բայց մինչև այդ օրը նա զեռ պիտի հոգացողութեան առարկայ լինի, թէ մարմնական աճեցողութեան և թէ հոգեկան գարգացման տեսակէտից. բայց որում սկզբում պիտի առաջին տեղը բռնէ մարմնի ուժեղացումը, իսկ վերջում՝ բարայական ու մրտաւոր հասունութիւնը:

Հասարակական կեանքի անզարգացած շըջանում երիտասարդի համար հոգացողը միմիայն ծնողներն են, որոնք առանց որոշ ծրագրի և առանց որևէ բարձր պարտաւորութիւն զգալու, սոսկ բնական բնագդով, մեծացնում են նրան, յարմարւելով ըոպէի (ժամանակի) պահանջին ու բաղաքակրթութեան նախնական վիճակին: Բայց քաղաքակրթութեան առաջ զնալով, անհատը զառնում է աւելի մեծ կազմակերպութեան, օրինակ՝ ցեղի, քաղաքական միութեան, պետութեան, անդամը: Ահա այդ կազմակերպութիւնը, երիտասարդի ծնողներից ու արինակից ազգականներից յետոյ, յանձն է առնում նրա համար հոգալ, կամ հոգաբարձու լինել: Փոքր առ փոքր առաջ է զալիս հոգաբարձական մի ամբողջ սիստեմ՝ նոր սերնդի հոգատարութեան ու առաջնորդութեան համար: Հարց է ծագում, թէ ինչպէս զարգացնել մարդու բոլոր ընդունակութիւնների, նրա հոգեկան

ոյժերի ամբողջ կօմպլէկտը, որպէսզի իւրաքանչ շիւր անհատ ըստ կարելոյն մօտ լինի մարդու իդէալին: Մարդու իսկական իդէալի և իրական մարդու մէջ միշտ մնում է մի որոշ տարածութիւն, մարդը չէ կարողանում հասնել իդէալին, սակայն չը կայ մի անանցանելի կէտ, որտեղ մարդկային զարգացումը ստիպւած լինէր ընդմիշտ կանդ առնելու: Զարգացողութեան շրջանը մի անսահման ճանապարհ է, և անհնարին է նախապէս որոշել, թէ երբ կը վերջանայ զարգացման ընթացքի մէջ գտնուող մարդու հոգատարութիւնը: Այնուամենայնիւ անհատի կեանքի ընթացքում նկատի են առնուում սի ժամանակ զարգացած ժողովուրդների մէջ որոշ տարեշրջաններ, օրինակ, մանկութեան, պատանեկութեան և այլն: Նախկին ժողովուրդների մէջ 14—17 տարօք պատանին արդէն հասունացած էր համարւում և միայն մինչև այդ տարիին էին հասակաւորները հոգաբարձու լինում մատաղ սերնդին: Բայց ինչո՞ւ, 2է որ այդ տարիներում երիտասարդի զարգացողութիւնը կանգ չէ առնում և յաճախ սկսում է ընթանալ մի բոլորովին անցանկալի ուղղութեամբ, և թէ երիտասարդը զուրկ է մնում խնամատարութիւնից: Ուստի աւելի քաղաքակիրթ ժողովուրդները ըմբռնեցին, որ մատաղ սերնդի հոգացողութիւնը պէտք է աւելի երկարատև լինի. այդ պահանջում է ոչ միայն նրա սեփական

շահը, այլ նոյնը ան էլ այն հասարակութեան օգուտը, որի մի անդամն է նա և որի կեանքի մէջ նա ապագայում որոշ դեր է կատարելու։

Այստեղից առաջ եկան դպրոցական լրացուցիչ հիմնարկութիւնները, որ և կոչւեցին լրացուցիչ դպրոցներ, որոնք ներկայում համարւում են մօգէրն կրթութեան էական գործոնը։ Ուրեմն լրացուցիչ դպրոցները, լայն մեխով առած, այն հիմնարկութիւններն են, որ մանկական հասակից դուրս եկած դեռահասներին շարունակում են առաջ տանել մտաւորապես։ Հետեապէս, Լրացուցիչ դպրոցը զոյութիւն ունի ոչմէ մանուկների, այլ պատանիների կամ երիտասարդների համար։ Եա առաջին, կամ աւելի ճիշտ, կենտրոնական տեղն է բռնում դաստիարակչական ամմոզ զործի մէջ, հոգաբարձական բնոյթ ունեցող բար աշխատանքները նրա շուրջն են կատարւում կամ նրա պակասները լրացնում։ Այսպէս որոշելով լրացուցիչ դպրոցի դերը, չենք ուզում ասել, թէ նա ինքը ոչ մի դաստիարակչական պարտաւորութիւն չունի, ոչ էլ կամենում ենք ասել, թէ երիտասարդութիւնը նրա պատերից գուրս մտաւորապէս չէ զարգանում։ Ոչ մի տեղ չէ կարելի կտրապան սահման գնել և իսկի կարել էլ չը կայ։ Իւրաքանչիւր հիմնարկութիւնն պիտի ազառ լինի, իւր սաների օպտին անելու այն, ինչ որ կարող է, աշխատանքը պէտք է այնպէս կազմակերպել, որ մի կողմից զիմաւոր

տեղը բոնէ սիստեմատիկ ուսուցումը, իսկ միտ ու կողմից աղատօբէն արծարծւի սիրոյ զործունէութիւնը։ Ուրեմն լրացուցիչ դպրոցի զործը այն է, որ սկզբնական դպրոցն աւարտած պատանիներին կամ երիտասարդներին առաջ տանէ որոշ ծրագրի համեմատ, թէ բարոյապէս և թէ մտաւորապէս։

Լրացուցիչ դպրոցը, ունենալով այսպիսի միծ նշանակութիւն, չէ կարող համարւել ոչ յատկապէս ընդհանուր կրթութիւն տուղ մի հիմնարկութիւն, ոչ էլ զուտ տեխնիկական, մասնագիտական դպրոց։ Ամբողջ կրթական գործի ասպարիզում նա մի շաղկապ է մի կողմից սկզբնական և միւս կողմից մասնագիտական դպրոցի մէջ։ Միայն թէ նրան չը պէտք է համարել որպէս մի անցողական շրջան, որպէս թէ նա պիտի հիմնելով սկզբնական դպրոցի վրա, նախապատրաստէ մասնագիտական ցածր դրաբոցի համար, եթէ մենք պատկերացնենք մեր առաջ մի ուղահայեաց սիւն, ուր շարւած են սիմեանց վրա սկզբնական դպրոցից սկսած մինչև բարձրագոյն դպրոցի բոլոր երթական հիմնարկութիւնները, լրացուցիչ դպրոցը կը հանդիսանայ իբր մի ինքնուրոյն անդամ՝ սկզբնական և ցածր—մասնագիտական դպրոցի մէջ տեղում։ Լրացուցիչ դպրոցի մտաւոր ամբողջ աշխատանքը հիմւած է սկզբնական դպրոցի վրա, եթէ ոչ բացառապէս, գոնէ ընդհան-

ըապէս, որովհետեւ ուրիշ տեղ պատրաս-
տւած աշակերտները հազիւ են մտնում լր-
բացուցիչ դպրոց։ Այնուամենայնիւ լրացուցիչ
դպրոցը սկզբնական դպրոցի սոսկ շարունակու-
թիւնը չէ, ոչ ըստ ծաւալի, ոչ էլ ըստ ուղղու-
թեան։ Լրացուցիչ դպրոցի նշանաբանը կոչումն
է, բառի ամենալայն մորով, այսինքն ոչ միայն
գիւղատնտեսական, այլ և արհեստաւորական,
ընտանեկան, քաղաքացիական, և մասսայական
կոչումը։ Կոչման համար պիտի այժմ մշակւի
սկզբնական դպրոցից բերւած պաշարը.
կոչման ասպարիզում պիտի գործա-
դրութիւն գտնին ձեւք բերւած պատրաստու-
թիւնները։ Սա է այն նոր ուղղութիւնը, որով
պիտի ընթանայ լրացուցիչ դպրոցի աշակերտը։
Եյս ուղղութեան համեմատ պիտի առարկաների
թիւն էլ սահմանափակվ։ Լրացուցիչ դպրոցում
պէտք է անցնել գլխաւորապէս այն առարկա-
ները, որոնք յետոյ գործադրութիւն են գտնելու
կոչման ասպարիզում, այսինքն՝ նկարչութիւն,
գրութիւն, թւարանութիւն, մայրենի լեզու,
ուսւաց լեզու, աշխարհագրական ու բնագի-
տական գիտելիքներ, երկրորդ տեղը պիտի բըռ-
նեն քաղաքակրթութեան պատմութեան վերա-
բերող գիտելիքները և մարմանամարզութիւնը,
այն էլ սահմանափակ կերպով, բանի որ սրանք
չեն կարող լրացուցիչ դպրոցի համար կարևոր
առարկաներ համարւել։

Սկզբնական դպրոցի նպատակն է առհա-
սարակ մարդ պատրաստել, բառի երկու նը-
շանակութեամբ։ Նախ որ սկզբնական դպրոցը
ամեն ը ի համար է, առանց դասակարգի ու
կոչման խորութեան, և երկրորդ, որ նա ոչ մի
մասնաւոր նպատակի համար չէ պատրաստում,
մարդու այս ու այն ընդունակութիւնը կամ տա-
գանդը իր հոգացողութեան առարկայ չէ դարձ-
նում, այլ աշխատում է մարդուն կրթել որպէս
մարդ, ներդաշնակօրէն գչըրգացնել նրա բոլոր
ընդունակութիւնները։ Սկզբնական դպրոցը ուշ
չը դարձնելով ոչ աշակերտի դասակարգին, ոչ
էլ նրա ապագայ կոչման, նրան պատրաստում
է ոչ թէ մի որոշ կոչման, այլ բոլոր կոչումնե-
րի համար ընդհանրապէս։

Ուրիշ բան է լրացուցիչ դպրոցը, նա բո-
լորովին շեղւած կը լինէ իր նպատակից, եթէ
զեկավարւէ աշակերտին սոսկ մարդ դարձնելու
սկզբունքով, և լուրջ ուշագրութիւն չը դարձի
նրա ապագայ կոչման վրա։ Այդ դպրոցը այն-
քան աւելի կը համապատասխանէ իր նշանա-
բանին, որքան աւելի կը թափանցէ կոչման մա-
րդութիւնը։ Սկզբնական դպրոցի աշակերտը
ընտանիքի, այդ հանրամարդկային հիմնարկու-
թեան անդամն է, առանց որոշ կոչման, զուրկ
որևէ նշանաբանից։ Խոկ լրացուցիչ դպրոցի ա-
շակերտը որոշ կոչում ունի, ներւած է կեանքի
որոշ նպատակին, ուստի և իրաւունք ունի պա-

հանջմուռ, որ համապատասխան կը թութիւն տան իրան։ Սկզբնական գպրոցի լուան ճակատին կրւած է «Մարդի կրութիւն», իսկ լրացուցիչ դպրոցի ճակատին՝ «Կոչման կրութիւն»։

Ահա թէ ինչ սկզբունքային տարբերութիւն կայ լրացուցիչ ու սկզբնական դպրոցների մէջ. այդ տարբերութիւնը շատ էլ որոշ կերպով չէ երևում ժողովրդական դպրոցներում, աւելի որոշ է ընդհանուր լրացուցիչ դպրոցներում, իսկ ամենապարզ կերպով արտայատում է քաղաքների բազմաճիւղ լրացուցիչ դպրոցներում, որոնք նման են մասնաճիւղական դպրոցներին։ Այժմ արդէն կարելի է որոշ սահման հաստատել լրացուցիչ ու մասնագիտական դպրոցների մէջ (այստեղ մեր խօսքը վերաբերում է մասնագիտական ցածը դպրոցներին)։ Յիշեալ երկու կարգի դպրոցները իրար նման են այն բանով, որ երկուսն էլ լրացուցիչ ուսում են տալիս սկզբնական դպրոցը աւարտածներին, այն էլ իրանց կոչման համեմատ. բայց երկու դպրոցների մէջ կայ և մի շատ որոշ տարբերութիւն, ինչպէս որ սկզբնական ու լրացուցիչ դպրոցները իրարից տարբերում են արտաքին ու ներքին նշանով, մարդու և կոչման սկզբունքներով, նոյնպէս էլ այս անգամ։ Արտաքին տարբերութիւնն այն է, որ լրացուցիչ դպրոցի աշակերտը դպրոց յաճախելու տարբները ամբողջովին իր կոչման ասպարիզումն է գտնւում, մինչդեռ մաս-

նաճիւղական դպրոցի աշակերտը չէ կարող իր կոչման մէջ համարել, քանի զեռ դպրոց է յաճախում։ մասնաճիւղային դպրոցը յաճախելու ժամանակամիջոցում նա կամ ընդհատել է իր բուն գործունէութիւնը (որպէս դիւղատնտեսական կամ արհեստաւորաց դպրոցի աշակերտ), կամ թէ զեռ բնաւ մտած չէ իր բուն կոչման ասպարիզը։ Բայց այդ արտաքին մօմենտից կայ և մի ներքինը. Լրացուցիչ դպրոցը վերաբերում է հոգաբարձական (մատադ սերնդի համար հոգալու) շրջանին, և կոչման նախապատրաստութիւնը լրացնելու բնաւորութիւն ունի։ Եյս երկու հանգամանքները դուրս են մասնաճիւղային դպրոցի գաղափարից, եհարկէ, վերջինս էլ կարող է որոշ չափով ուշ դարձնել իր սաների գաստիարակութեան վրա, բայց այդ բանը նրա համար սկզբունք չէ, և որպէս մի կողմնակի բարի գործ, չէ կարող բնորսաշ կնիք գնել նրա վրա։ Մասնաճիւղային դպրոցի գործն է նախ և առաջ իր աշակերտների տեխնիկական գարգացումը և սրանով են պայմանաւորւած նրա բոլոր ձեռք առած սիջոցները։ Լրացուցիչ դպրոցը իր ձագումով և իր գաղափարով գոյութիւնն ունի՝ ժողովրդի լայն խաւերի գաստիարակութեան և իր աշակերտների հիմնաւոր տնտեսական—տեխնիկական գարգացման համար։ Նա եղել է և պիտի մնայ որպէս մի գուտ դաստիարակչական

հիմնարկութիւն՝ կոչման համար պատրաստողի գրոշմով։

Մասնագիտական դպրոցը հիմնում է իր ուսուցմունքը այն մետօղիկական սկզբունքների վրա, որ նա գտնում է՝ մշակելով իր ձեռքի տակ եղած նիւթը, և ուսումնասիրելով սրա մէջ կատարւող ներքին շարժման օբխնճերը. իր պրակտիկական գործունէութիւնը առաջ է տանում նա առանձին արհեստանոցներում՝ տեսական—մետօղիկական աշխատանքի հետ զուգընթաց, Այսպէս չէ լրացուցիչ դպրոցը. սա պիտի ամրողացնէ պրակտիկական գործունէութիւնը տեսականորէն, ուրեմն նա պիտի միանայ վերջինի. հետ որքան կարելի է սեղութէն, ուստի և չէ կարող ձեռնարկել գիտելիքների մէտօղիկական—գիտական մշակութիւնը. Եթէ նա այսպէս վարւէ, շեղւած կլինի մեր իսկական ծրագրից։

Մեր տւած բացատրութիւնների համեմատ այդ նպատակը այն է, որ արդէն աշխատանքի ասպարէզ մտած դպրոցաւարու պատանիներին, առնելով իր խնամատարութեան տակ, ուսուցանելով ու կրթելով այնպէս առաջ տանէ, որ նրանք ոչ միայն ըստ կարելոյն բարձր աստիճանի հասնեն իրանց գործունէութեան ասպարիգում, այլև միաժամանակ գիտակցարար վերաբերեն դէպի իրանց ազգային ու քաղաքացիական պարտաւորութիւնները. դպրոցը պիտի այս նպատակին հասնէ դպրոցական սիստեմա-

տիկ ճանապարհով առօրեայ աշխատանքի հետ ձեռք ձեռքի տւած։ Բայց որովհետեւ նա նայում է իր գործունէութեան վրա դաստիարակչական—հոգաբարձական հայեցակէտից, ուստի չէ կարող բաւականանալ դասարանական աշխատանքներով. այդ բանը նա պիտի լրացնէ մի շարք կողմնակի ձեռնարկութիւններով, (որոնց մասնակցելը պարտաւորական չէ ոչ աշակերտների, ոչ էլ ուսուցիչների համար) որոնք են մարմնամարզութիւնն, աշակերտական ճանապարհորդութիւնն, աշակերտական գրադարան, ազատ դասախոսութիւններ, գրական երեկոններ, խնայողական կասսա աշակերտների համար և այլն։ Մարմնամարզութիւնը պիտի ամրացնէ մսանունըր, ֆիզիկական ոյժը զարգացնէ՝ աղգային ոգեսութեամբ ներշնչած և բնտելացնէ ինքնահոգացողութեան գաղափարին։ Ծշակերտական գրադարանները պիտի զարգացնեն ընթերցանութեան ճաշակը. ազատ դասախոսութիւնները պիտի խորացնեն դպրոցի տւած տեսական գիտելիքները, երեկոյթները պիտի աղնիւ զւարձութեան մասին զաղափար տան, խնայողական կասսաները պիտի գորեղացնեն խելացի խնայողութեան զգացմունքը և այլն։

Ուրեմն դաստիարակչական գիտութիւնը պիտի պահանջէ, որ մարդ զառնալու համար պատրաստող սանը, սկզբնական կրթութիւն ստանալուց յետոյ, գեռ շարունակէ աւելի դաստիա-

բակւել, և մանաւանդ այդ զատտիարակութիւնը
պիտի աչքի առաջ ունենայ՝ մտցնել սանին սօ-
ցիալական յարաբեքութիւնների մէջ, և ուշա-
գրութեան առնէ այդ յարաբերութիւնների աղ-
դեցութիւնը նրա բարոյական հայեացընների
վրա։ Սանը այդ ժամանակ պիտի առաջնորդուի
զէտի մտքերի մի նոր շրջան։ այն զպրոցը որ
նա այժմ յաճախում է, կրկնողական զպրոց չէ,
և այդ լրացուցիչ զպրոցը պարտաւոր է աշա-
կելտի ճանապարհը հարթել վերոլիշեալ շրջանը
մտնելու համար, այդ նրա բարոյական պարտա-
ւորութիւնն է։ Բայց բռուր այդ յարաբերու-
թիւններից ամենապարզն ու հասկանալին այն
յարաբերութիւններն են, որոնք կապւած են
նրա ընտրած կոչման հետ։ Այստեղից ծագում
է զաստիարակչական գիտութեան մի նոր,
ինքնըստինքեան հասկանալի պահանջը, որ աշա-
կերտի կոչումը Լրացուցիչ զպրոցի տւած կրը-
թութեան կենտրոնը պիտի կազմէ, քանի որ
աշակերտը պիտի զաստիարակւի որպէս հաստ-
րակութեան անդամ։ Սկզբնական զպրոցում
ընտանիքն է կազմում աշխարհայեացը կրթու-
թեան կենտրոնը, եթե կամենում ենք աշակեր-
տի առաջ լուսաբանել հաստիարակական յարաբե-
րութիւնները, որովհետև երեխան միայն ընտա-
նիքն է լաւ ճանաչում որպէս հաստիարակական ճի
ամբողջութիւն, և առայժմ ընտանիքից գուրս
ոչ մի հաստիարակական կազմակերպութիւն նրան

չէ հետարրբում։ Իսկ Լրացուցիչ դպրոցում
սովորող պլստանու մտավատկերների շրջանում
տիրապետող տարրը կոչումն է, ոս է կենտրօ-
նական կէտը՝ նոր աշխարհայեացը, այլ առհասարակ ամբողջ կրթութեան համար, որ-
պէսպի այդ կրթութիւնը գրական հետեանք ու-
նենայ՝ թէ ձեւական և թէ նութեական տեսակէ-
տից։ Սակայն այդ զլխաւոր պահանջից բաց,
Լրացուցիչ զպրոցը պիտի բաւարարութիւն տայ
զարձեալ մի բանի ուրիշ պահանջների։ Յայտնի
է, որ Լրացուցիչ զպրոց յաճախ մտնում են գե-
ռահաս երիտասարդներ, որոնք կամ չեն վեր-
ջացըրել սկզբնական զպրոցը կամ թէ կիսատ-
պուատ են վերջացըրել, որոնք ուրեմն իրանց սո-
վորածի մէջ աչքի ընկնող պուատներ ունեն,
ինքնըստինքեան հասկանալի է, որ Լրացուցիչ
զպրոցը պարտաւոր է այդ պուատները լրացնել։
Բայց նա այստեղ ևս չգիտի սիստեմատիկ ճա-
նտպարհով ընթանայ, այլ պիտի բնորե յատկա-
պէս այն պակասները, որոնք ապագայ կոչման
ասպարիզում կարող էին զգալի լինել, ահա այդ
պակասները պիտի լրացնէ զպրոցը, որպէսպի
հապատած լինի աշակերտի կոչման։ Այժմ, եթե
զաստիարակութեան նշանաբանը համարում է
աշակերտի բարոյական բնորոշի կազմակերպումը,
Լրացուցիչ զպրոցի համար մի նոր խնդիր է
առաջ գալիս. զպրոցը պիտի խորացնէ աշակեր-
տի բարոյական զաղափարները և նրան պիտի

հողորդէ նոյնպէս բարոյական նոր իդէաներ։ Ուրեմն անվիճնելի է, որ Լրացուցիչ զպրոցը այդ ուղղութեամբ էլ կարևոր գործ ունի կատարելու, այնպէս որ նա ունի երեք որոշ գործեր՝ 1) պիտի առաջնորդէ աշակերտին դէպի իր կոչման ասպարէզը, 2) պիտի խորացնէ այն պակասները, որ երեսում են աշակերտի արդէն ձեռք բերած գիտելիքների ու պատրաստութիւնների մէջ, և որոնք կարող էին յետագայում վնասակար լինել կոչմանը, և 3) պիտի խորացնէ աշակերտի բարոյական հայեացքները և նրան հաղորդէ նոյնպէս նոր բարոյական սկզբունքներ։

Տարաբաղդաբար ինձ անհնարին է այս փոքրիկ զբւածքի մէջ աւելի մահրաժան նկարագրել Լրացուցիչ զպրոցի ամբողջ կազմակերպութիւնը. ես կամենում էի միայն մի համառօտ հայեացք զցել յիշեալ զպրոցի վրա։

Ինչ որ արդէն ասել ես, կը կըկնեմ այժմ համառօտ կանօնների ձեռք, որպէս զեկավարող սկզբունքներ՝

1) Լրացուցիչ զպրոցը պիտի կըթէ աշխատաւոր երիտասարդութիւնը՝ պատրաստելով նրան կոչման ասպարիզի և ընդհանրապէս կեանքի համար։

2) Այս նպատակի համեմատ պիտի ընտըրեն ուսուցանելու առարկաները. սրանցից կարենագոյններն են՝ կոչման գիտութիւնը, հայելէնը, ուսուելէնը, հաշւապահութիւնը՝ մուլհա-

կազիութեան հետ միասին, երկառաչափութիւնը, թւարանութիւնը և այլն։

3) Կոչման դիտութիւնը պիտի լուսաբանէ աշակերտների աշխատանքի ու կնանքի ասպարէզը գիտական տեսակէտներից, քաղելով այս նպատակի համար հարկաւոր նիւթերը այն առարկաներից, որոնց հետ ի մօտոյ կապւած է աշխատանք անողի մասնաւոր գործունէութիւնը։

Աշակերտին գործառնութեան մէջ վարժեցնելու համար պէտք է դասաւութեան այդ նիւթերը զլխաւորապէս բացատրել ու լրացնել լեզուական ու մատիմատիկական տեսակէտներից։ Ուրեմն կոչման դիտութիւնը որպէս ասացնորդող առարկայ պէտք է դնել ամբողջ դասաւութեան կենտրոնում, իսկ միւս առարկաները պիտի խմբւեն նրա շուրջը։

5) Թէ տեխնիկական և թէ գիւղատնտեսական վարժութիւնը, ուսման հետ միասին, որը շատ կոչումների համար անհրաժեշտ է, պէտք է օրգանական կերպով կապել Լրացուցիչ զպրոցի տւած տեսական կըթութեան հետ, որպէսզի աշակերտները ոչ միայն գիտենան, այլ և կարողանալը գիտութիւնը ու հմտութիւնը (կարողանալը) փոխազարձաբար միմիանց նպասելով, այնպէս կը կատարելազործեն աշխատաւոր դասակարգը, որ սա կը կարողանայ հա-

մապատասխանել իրանցից արւսդ բոլոր պահանձներին:

Այժմ երբ մենք արդէն նկարագրեցինք Իրացուցիչ զպրոցի էութիւնը և որոշ սահմաններ դրինք այդ հիմնարկութեան և նրա հարեան դպրոցների մէջ, մոռւմ է մեղ պարզել, թէ ինչ տեղ է բռնում Զմեռային զպրոցը՝ ժամանակակից կրթական գործի ասպարիզում:

Զմեռային զիւղատնտեսական զպրոցը այն հիմնարկութիւնն է, որ ազատում է երիտասարդ զիւղացուն՝ իր հայրական տնտեսութիւնից երկարատե բացակայելու պարտաւորութիւնից, բայց և այնպէս տալիս է նրան բաւար կրթութիւն։ Ինչպէս արդէն անունից երեսում է, դրաբ րոցի գործունէութիւնը միայն ձեռն է տեղի ունենում, և հէնց այստեղ է նրա իսկական նշանակութիւնը որ զիւղացու համար շատ արժեքաւոր է, բանի որ նա առանց իր որդու օդնութեան երկար տարիներ անկարող է տնտեսութիւնը կանոնաւոր վարել։ Զմեռ զիւղացու համար գործի սակաւ ժամանակն է. թէն զիւղացին ձմեռն էլ բոլորովին պարապ չէ, բայց և այնպէս զիւղացի հայրը այդ ժամանակ կարող է կառավարել առանց երիտասարդ որդու գործակցութեան։ Այդ կարգի դպրոցները սկիբոր են առել Հարաւային Գերմանիայում, առայժմ շատ ընդունած են, ուստի և նրանց թիւր սատոիկ աճել է Գերմանիայում։

Ինչպէս արդէն ասել ենք, Զմեռային դպրոցի նպատակն է կրթել գեռահաս տնտեսներին իրանց ապագայ կրում ան համար, ի նկատի ունենալով նախ և առաջ զիւղացու որդուն։

Այս դպրոցի գործունէութիւնը սեւտ կերպով կապւած է սկզբնական զպրոցի գործունէութեան հետ, նա շարունակում է սկզբնական զպրոցի գործը, ընդպարձակելով աշակերտների արդէն տւնեցած պաշարը, և սովորցնում է գործադրել ձեռք բերած զիւղութիւնը՝ գործնական կնանքում ընդհանրապէս և երկրագործութեան ասպարիզում մասնաւոր գէս։ Բացի այդ, ուսման ծրագիրը պարունակում է իր մէջ այն բոլոց գիտելիքները, որ անհրաժեշտ են մի բացիօնէլ, վերջին տասնսմետակների հակայական առաջադիմութեան համապատասխան, տնտեսութեան համար, որպէսզի այսպիսով ապագայ տնտեսը հնար ունենայ լաւ դիմադրելու հայկական, կամ աւելի ճիշտ, կովկասեան տնտեսութիւնը դժւարացնող տնտեսական և ընդհանուր բազարական յարաբերութիւններին։ Այդ նպատակի համար անհրաժեշտ է տնտեսական գործառնութեան հիմքը կազմող բնական օրբէնների վարժութիւնը՝ տնտեսայիսն հանդամանքների ու բնական երեսների ճիշտ ըմբռասութեան համար։ Առանձնապէս պէտք է ուշադրութիւն դարձնել մտածողութեան վրա։

Ոչ մի կոչում այնքան լուրջ մտածողութիւն չէ պահանջում, որքան զիւղատնտեսական կոչումը:

Բանը նրանում չէ, որ լցնեն աշակերտի գլուխը որոշ քանակութեան խառիխուսն տեղեկութիւններով, որոնք յաճախ մի փուչ ու ապարդիւն բեռ են կազմում միայն. նոյնպէս այն չէ կարենոր որ աշակերտին տան զանազան ըէցէպտներ, որոնք միմիայն պատահական դէպքերի համար կարող են նշանակութիւն ունենալ և յաճախ անմտաբար ու անտեղի գործադրւելով նոյնիսկ մեծ վնաս կը բերեն. կարենոր նիւթի գիտակցական ըմբռնողութիւնն է, որ «ի՞նչպէս» և «Ինչո՞ւ» հարցերի լուրջ քննութեան հետեանքն է: Որքան հնարաւոր է, պէտք է ուսուցումը հայեցոլական լինի՝ աշակերտների գիտելու ընդունակութիւնը զարգացնելու համար: Այս ուղղութեամբ տեղի ունեցող վարժութիւնը ոչ միայն կը նպաստէ գիւղատնտեսական գործառնութեան ընդհանուր բարձրացման, այլև կը բարձրացնէ հողագործ զասակսրգի գիրը, որովհետեւ մի զասակարգի արժանիքը ու պատիւը արտաքուստ չէ ստացում, այլ զասակարգը ինքն է բարձրացնում իրան՝ երեան հանելով ուշագրութեան արժանի առաւելութիւններ: Վաղուց անցան այն ժամանակները, երբ այն մարդը, որ ուրիշ ոչ մի կոչման համար բաւականաշափ խելք չէր ունենում, միանգանայն բաւակար բ համարւում երկրագործի կոչման հա-

մար: Խսկ մեր ժամանակի երկրագործը պիտի ունենայ ոչ միայն ամուր թիկունք ու զօրեղ բազուկներ, այլ նախ և առաջ մի լուսաւոր գլուխ: Մի նշանաւոր տնտեսագէտ ասում էր, թէ երկրագործի կոչումը մարդկային բոլոր կոշումների շարքում միակն է, որի համար գիտութեան բարձրագոյն աստիճանը անհրաժեշտ է: Որքան միամիտ է ուրեմն այն գիւղացի հայրը, որ ասում է՝ «Իմ որդին ուրիշ բան չէ ուզում գառնալ, բայց եթէ մի երկրագործ, խսկ սրա համար մի առանձին կրթութեան կարիք չկայ: Հայրը ու պապը նոյնպէս լուրջ աշխատաւորներ են եղել, թէև մասնագիտական կրթութիւն չեն ստացել»: Այսպէս խօսողները տեղեկութիւն չունեն՝ գիւղատնտեսութեան ասպարիզում տեղի ունեցած յեղաշբարութեան մասին, որ առաջ եկաւ անցեալ դարում բնական գիտութիւնների ու տեխնիկայի ազգեցութիւնից և մշտապէս ճիւղաւորւող հաղորդակցութեան ճանապարհների միջոցով ներսում արտաքին մըցման առաջ բերած վտանգների շնորհիւ: Այդ մարդիկ թերևս շափաւոր ու սահմանափակ ապրուստ անելով, տակաւին պատկանում են այն երջանիկների թվին, որոնք պարտքերից ազատ մի հողաբաժին ունեն և դեռ կարող են դիմանալ: Բայց շուտով կը գայ այն օրը, երբ սրանք կասեն՝ «Մեր իմաստութիւնը ու զօրութիւնը այլսս սպառւած է, թող պետութիւնը օգնէ մեզ, եթէ

ոչ, մենք կորած ենք։ Ուրեմն մի կողմ թողնենք նախավաշարմունքը, որպէսզի յետոյ զըզջալու պատճառ չունենանք։ Հետզհետէ աճում են այն պահանջները, որ իւրաքանչիւր անհառից անում են հասարակական դորժերի դեկավարները։ Այդ պահանջներին գոհացում տալու համար, բացի ինքնուրոյնութիւնից և ամուր ընաւորութիւնից, հարկաւոր է ունենալ բաւականաշափ գիտութիւն, և այդ բանը մահաւանդ անհարժեշտ է զիւղատնտեսական ընկերական և ընկերակցական ասպարիզում մասնաւոր ծառայութեան համար։ Դեռ զարգացման առաջին աստիճանի վրա ստուող այդ հիմնարկութիւնները պիտի լուծեն մի մեծ խնդիր՝ նրանք պիտի դուրս բերեն տնտեսական ճգնաժամի մէջ զըտնուող մանք զիւղացիութիւնը անօգնական դրութիւնից։ Բայց ի՞նչպէս կարող են նրանք իրականացնել մի այսպիսի հակայական ծրագիրը։ Եթէ զիւղական ազգարնակութեան շրջանում չեն գտնել մարդիկ, որոնք զինւած լինելով թէ ընդհանուր և թէ մասնագիտական զիտելիքների պաշարով, ընդունակ լինէին դեկավարելու միշեալ հիմնարկութիւնները։

Սակայն միանգամայն սխալ կլինէր կարծի, թէ զիւղատնտեսական շմեռային դորոցը կարող է հայթայթել բոլորովին «պատրաստ» զիւղատնտեսներ։ Սա մի անհարին բան է, որ չէ կարող անել ոչ մի դպրոց, Դպրոցաւարտ

երիտասարդը չպիտի բաւականանայ իր ձեռքբերածով, որ միտիայն մի «յառաջաբան» կարող է համարւել, այլ նա պիտի յիտոյ ուսումնասիրէ զիւղատնտեսական ընտիրը զբրեր, միշտ կարդայ պարագերական հրատարակութիւնները, որպէսզի կարողանայ հետեւ առաջադիմական նորանոր քայլերին։ Դիւղական տնտեսին նոյնավէս վերաբերում է այն հին ասացւածը, թէ մարդը պիտի ուսանէ մինչև մահւան բոպէն։

Ուրեմն զիւղատնտեսական շմեռային զըպըցի զլխաւոր նպատակն է՝ հնարաւորութիւն տալ մանք ու միջին զիւղացիների որդիներին, լստ կարելոյն քիչ ժամանակ ու զրամ զօհելով ձեռք բերել մասնագիտական և ուրիշ զիտելիքների այն անհրաժեշտ քանակութիւնը, որ պահանջում է ժամանակակից տնտեսութիւնը։ Բայց որովհետեւ շմեռային իւրաքանչիւր սեմեստր բազկացած է միայն 6—7 ամսից (սեպտ.-հոկտ. սկզբից մինչև մարտի վերջը) և որովհետեւ անցնելիք զաւընթացը բազմատեսակ ու լայնածաւալ է, ուստի միանգամայն պարզ է, որ աշակերտները այնքան աւելի կատարեալ կերպով կը համսնեն իրանց նպատակին, որքան աւելի լաւ է նրանց նախապատրաստութիւնը և որքան աւելի են հմուտ գործնական զիտելիքների մէջ, որոնք լապէս հեշտացնում են զիւղատնտեսական ու բնագիտական առարկաների ըմբունումը։ Փոլձը ցոլց է տալիս, որ զպրոցի ամենալաւ

աշակերտները լինում են այն գիւղական պատանիները, որոնք թէ լաւ սկզբնական կրթութիւն են ստացել և թէ միքանի տարի գործնականապէս աշխատել են հայրական տնտեսութեան մէջ։ Դպրոցի դաստիարակչական գործունէութիւնը նախ և առաջ կայանում է՝ մտածելու ընդունակ տնտեսներ պատրաստելու մէջ։ Քանի որ մտածելու ընդունակութիւնը ամենալաւ դրամագլուխն է սկսնակ գիւղատնտեսի համար, ուստի պէտք է նպաստել նրան՝ սիստեմատիկաբար զարգացնելով աշակերտի հոգեկան գործունէութիւնը։ Ի սէր ծնողների, յանուն ամբողջ գիւղատնտեսութեան և ոչ պակաս յանուն գպրոցի հեղինակութեան, պէտք է երիտասարդ պարոններին պարտաւորեցնել, որ իրանց կրթութեան սուղ ընթացքում իրանց դասերին հետեւեն բուռն եռանդով։ Այս նպատակին աւելի կատարեալ կերպով հասնելու համար Զրմուային դպրոցը, բացի մասնագիտական լինելուց, պիտի և լրացուցիչ դպրոցի դեր կատարէ, եթէ երիտասարդը, սկզբնական դպրոցից հեռանալուց յետոյ չի վարժվի գրաւոր աշխատանքի, թւարանութեան, հողաչափութեան և երկրաչափութեան մէջ, կարող է պատահել, որ նա ինքնուրոյն տնտես գառնալիս, իր սովորած գիւղելիքների մեծ մասը արդէն մոռացած լինի։ Քանին են արդեօք կարողանում փոքրիշատէ անսխալ գրել, մի զեկուցում, մի զանդատ շա-

րադրել։ Քանին են կարողանում արագ կերպով մի ուղիղ հաշիւ կազմել, որ անհրաժեշտ է նոյնիսկ ամենապարզ հաշւապահութեան ոէջ, կամ որոշել տոկոսները կամ պարտքերի վճարումները։ Զմեռալին դպրոցների ուսուցիչները շատ լաւ գիտեն, որ այսպիսի բաների մէջ ընդունակների թիւը շատ չնշին է։ Ուսկայն մեր գիւղական դասակարգը արդ բաների մէջ պիտի յետ չմնայ տնտեսական միւս շրջաններից, եթէ նա կատենում է շահերի մրցութեան ներկայ տարեշրջանում պահպանել իր դիրքը և իրաւունքները, որովհետև «Լուսաւորութեան հետեւանիքը ազատութիւնն է»։

Նախընթաց լուսաբանութիւնից տեսնում ենք, որ գիւղատնտեսական Զմեռային դպրոցները շատ լայն նպատակ ունեն։ Եւ իսկապէս նրանց բերած արդիւնը հանդիսացաւ որսկէս առատ վարձատրութիւն՝ գործ դրած աշխատանքի համար, որովհետև զեղեցիկ պտուղներ ստացւեցին։ Երբ կը գայ այն օրը, որ մեր գիւղացիք կը մբռնեն այդ դպրոցների նշանակութիւնը, այն ժամանակ զժւար չի լինիլ բացել մի շարք Զմեռային դպրոցներ մեր հայրենիքի և ամբողջ պետութեան շահի համար։

ների ամբողջ շքանը, այս գլակուում կարելի է ամառային լրացուցիչ դասընթացներում անցնել զիւղատնտեսութեան որոշ հատածները, այս ինքն երկրագործութիւնը, տնկարանութիւնը և անասնապահութիւնը, ինչպէս և բնական գիտութիւնը, մանաւանդ բուսագիտութիւնը. հարկաւոր է նոյնպէս նորից կողմել և աւելի հիմաւոր սովորցնել անցած դասելի աւելի կարևոր կէտերը, և ցոյց տալ, թէ ինչպէս սլիտի աշակերաները շահեցնեն իրանց սովորածը զիւղակերաները շահեցնեն իրանց սովորածը մէջ: Կրկնողագատնական զործառնութեան մէջ: Կրկնողական և լրացուցիչ ամբողջ դասընթացքը բաղկացած է բուն դասատութիւնից, զործնական ցուցմունքներից գպըօցի այգում, և շրջակայութիւններից: Որպէսզի աշակերտների համար հնարաւոր լինի դասընթացքին մասնակցելը, նրա տեսողաթիւնը պէտք է սահմանափակել առաջին անգամ երկու շարթով և այնպիսի ժամանակամիջոց ընտրել, երբ դաշտային աշխատանքները ընդհատած են լինում, օրինակ գարնան ցանքսի վերջից մինչև խոտի հնձի սկիզբը, իսկ հետեւալ կրկնողական շրջանը կընտրի հանդամանքների համեմատ:

Հէնց որ եղանակը որևէ կերպ նպաստաւոր եղաւ, շաբաթ կամ կիրակի կէտրից յիտոները մասնագիտ ուսուցիչները պէտք է էկսկուլիաներ անեն զէպի կալւածքները և օրինակելի զործավարութիւն տնեցող տնտեսութիւնները և ար-

ԵՐՐԱՐԴ Գ. ԼՈՒԽ.

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԻՒՆԲ.

Այս գլխի մէջ պիտի համառօտակի արձարենք մեր հիմնարկութեան գործունէութեան ծրագիրը: Թէ ինչպէս պիտի ընթանայ դասաւութիւնը, այդ մասին բաւական մանրամասն խօսել ենք: Այժմ մասում է մեզ յիշել նոյնպէս սպէցիալ դասընթացքների, կրկնութեան, ազատ ուկնղիրների, շարժական դասաւանդութեան, էկսկուլիաների, ժողովածուների և այլ պարագաների մասին:

Դասաւութեան եղանակի վերաբերմարկ կաւելացնենք, որ պէտք է աշխատել բոլոր դասերը հինգ դպրոցում սովորցնել, այսպիսով աշակերտները աւելի հիմնովին կը սովորեն: Տան համար առհասարակ շատ քիչ դրազմունք պէտք է տալ: Դասերը տեսելու են ժամի 9—12 և 2—5-ը:

Եթէ դժւար լինի մէկ ձմեռային դասընթացքում վերջացնել զիւղատնտեսական գիտութեան և նրան կից լինող բնական գիտութիւն-

Հետանոցները. Ալավեսով նրանք աւելի է՛րնդարձակեն աշակերտների մասնագիտական պաշտը և կը նպաստեն նրանց ընդհանուր զարգացման:

Բայց աւելի հասակաւոր պրակտի'յանտներին նոյնպէս պէտք է միջող տալ զպրացից օգտվելու, այնպէս որ կարողանան աւելի մեծ արդիւնք տուանալ իրանց հայրական տնտեսութիւնից: Սրա համար հարկաւոր է կազմակերպել կարճաժև դասընթացներ: Այսուղի պէտք է ունկընդիրներին ծանօթացնել գիւղատնտեսութեան դանագան ճիւղերի մէջ պատահող նորութիւնների հետ, և մատնացուց անել սովորական գործառնութեան ասպարիզում շարունակ կրկնառ սխալների ու մոլորութիւնների վրա: Այս պէտք է անել՝ այն արդիւնաւոր միջոցների ու մէտողների լուսաբանութեամբ, որոնք ծառայում են արդիւնքը աւելացնելու համ վնասակար ազգեցութիւնների դէմ մաքառելու համար: Այսպիսով մինչը նախատած կրինենք ոչ միայն ուկրնդիրներին այլև ընդհանուր տնտեսութեան զարգացման:

Ճառ անգամ պատահում է, որ հասակն առած տնտեսներ կամ մասնաւոր մարդիկ, կամենալով կատարելազործւել գիւղատնտեսութեան, բնական գիտութեան, կամթէ սրա այս ու այն ճիւղի մէջ, խնդրում են ընդունել իրանց, որպէս ազատ ունկընդիթք Սրանք կարող են կա-

մաւոր կերպով ընտրել իրանց ուզած առարկա-
ները: Բայց պէտք է պահանջել, որ ընտրած
դասերին կանոնաւոր լաճախին և առնասարակ-
յարժարւեն դպրոցի կարգ ու կանոններին:

Որպէսզի երկրագործ ժողովուրդը նոյնպէս օպտի դպրոցից, պէտք է կազմակերպել շարժական դասեր (շրջիկ ուսուցման գործունէութիւն): Դպրոցի ուսուցելիքները պիտի գիւղական ժողովորդի առաջ այստեղ ու այնտեղ դասախոսութիւններ կարդան՝ նըանց հետաքրքրող մասնագիտական հարցերի մասին և իրանց խորհուրդներով պաշտպան հանդիսանան տնտեսական բոլոր խնդիրնեցի մէջ: Գիւղատնտեսութեան խրաքանչիւր ուսուցիչ պիտի ուրախ լինի տեսնելով, որ իր մտքերը ըմբռնում են բոլոր ունկնդիրները: Ի հարկէ շատ ցանկալի է, որ այս գործի մէջ որոշ ամբողջականութիւն պահպան-ւի. սուա համար պիտի դասախոսների և ունկնդիրների մէջ տեղի ունենայ կարծիքների փոխանակութիւն: Տարէց տարի հին փորձառութիւնների վրա աւելանում են նորերը և ցանկալի է որ այդ փորձառութիւններից ծառայեն ընդհանրութեան շահերին: Գուցէ այստեղ օգնութեան կը գանկառավարութիւնը կամմէ զանազան գիւղատընտեսական ընկերութիւններ, կազմակերպելով յիշեալ գործի ներկայացուցիչների համար տարեկան ընդհանրութ ժողովներ: Պատ չի լինիլ,

որ շըջանային վերատեսուչներն էլ տեղեկութիւն ունենան շարժական գասընթացըների կազմակերպութեան, նիւթերի ընտրութեան և ուսուցման եղանակի մասին։ Ասենից առաջ գասընթացըների ու գասախօսութիւնների դեկավարները աշխատելու են բուռն հետաքրքրութիւն գարթնեցնել մասնակիցների մէջ զէպի լաւ կազմակերպւած և կեանքի առատ ազբիւրից հանւած ուսուցմունքը, ինչպէս արել են դանիացիք ու շվեդացիք իրանց ժողովրդական բարձր դպրոցների վերաբերմամբ, այսպիսով մասնակիցներին կարելի է դարձնել լաւ ու նշանակալից զործի համար մաքառողներ և աշխատակիցներ։

Անշուշտ բոլոր այդ աշխատանքները կը նպաստեն այն բանին, որ ժողովուրդը կը մրանէ լաւ կազմակերպւած և եռանդով տարւող Լրացուցիչ կամ Զմեռային դպրոցի նշանակութիւնը և զործնական ազգեցութիւնը,

Եթէ թոյլ տանք սաներին՝ փորձերը ընդօրինակել, ապա նրանք ոչ միայն հիմնաւորապէս կը խրացնեն սովորածը, այլ և կ'ըմբռնեն, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի զործնական կեանքը ու պրակտիկան։ Բնագիտական նիւթերի մի կարևոր մասը թողնւած է աւելի բարձր ուսումնարաններին, մասամբ և Զմեռային զըպրոցներին այն հասարակ պատճառով, որովհետեւ կարծում են, թէ սուանց որոշ թանգարին զործիք-

ների փորձերի համար, անհնարին է յիշեալ նիւթերի մասին գաղափար տալ աշակերտներին։ Բայց մենք կարծում ենք, որ շատ անգամ առանց մեծ ծախսեր անելու, ձեռքի տակ ունենալով միայն առօրեաց կենքի սովորական տուարկաները, կարելի է փորձեր անել. այսպիսով կարող կլինէինք Զմեռային կամ Լրացուցիչ դպրոցում բաւական բանակութեամբ բնագիտական նիւթեր կատարելապէս մատչելի դարցնել աշխատարի համար։ Խսկապէս գարմանալի է տեսնել, թէ որքան քիչ հասկացողութիւն ունի զիւղացին հողի, բոյսերի ու կենդանիների մասին և ինչ սխալ գաղափարներ շատ առարկաների վերաբերմամբ։ Նրան պարզ գաղափարներ տալ և դիտել սովորցնել—այդ մի խնդիր է, որը շատ բարձր նշանակութիւն ունի։ Ահա այս խնդիրի լուծումը այժմ նախ և առաջ Լրացուցիչ դպրոցի պարտաւորութիւնն է։ Բայց որանով էլ հինգ Լրացուցիչ և Զմեռային դպրոցները դառնում են դպրոցական կազմի կարեռ անդամը։ Այսպիսի դպրոցը անհրաժեշտ է մեր ժողովրդի համար, որպէս մի կարեռագոյն լծակ՝ զիւղական ազգարնակութեան իմացականութիւնը և տնտեսական արժանիքը բարձրացնելու համար։ Աւստի մենք կարող ենք առայժմ մի կողմ թողնել թանգարին ժողովածուները և փորձելու աղարատները, որմնց համար գեռ ոչ զբամ ունենք, ոչ տեղ և աշակերտներին նախ գաղափար, կը

տանք այն մասին, թէ ինչպէս կարելի է սովորել հէնց մեզ շրջապատող բնութիւնից: Բնական է, որ զրադարձնի վրա էլ պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել:

Ի վեջոյ դարձեալ մի քանի խօսք ուսման ծրագրի, և դասաժամերի մասին: Ուսուցման առարկաները հետևեալիներն են՝

Դիւլատնեսութիւն.

Հոգակազմութիւն, պարարտացման գիտութիւնը, ազարակազիտութիւն, տնկարանութիւն, զործիքագիտութիւն, մարդարանութիւն, սնասնապահութիւն, սննդագիտութիւն, անասնաբուժութիւն և այլն:

Բնական գիտութիւններ.

Քիմիա, ֆիզիկա, բուսագիտութիւն (մանաւանդ գիւղատնտեսական բոյսերի), բուսաբանական էկոլոգիաներ (ամառը), հանքարանութիւն, կենդանաբանութիւն և այլն:

Տնտեսական-կազմակերպութիւն.

Գիւղատնտեսական գործավարութիւն, գիւղատնտեսական [և առևտրական հաշւապահութիւն, քաղաքատնտեսութիւն և այլն:

Գիւղատնտեսական արհեստեր, կամ օժանդակիչ պարապմունքներ՝ կաթնատնտեսութիւն, գինեգործութիւն, այգեգործութիւն և այլն:

Լրացուցիչ առարկաներ.

Հայոց և ուսուաց լիգուներ, թւարանութիւն (մանաւանդ գիւղատնտեսական), տնտե-

նական աշխարհագրութիւն, երկրաշափութիւն, հողաշափութիւն, յատակագծագրութիւն, հարթաշափութիւն, գրութիւն և այլն:

ԴՊՐՈՑԻ ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

(Ա իստեմատիկ ծաւալը)

Ներքի յիշեալ ծրագիրը մի նախագիծ է, որը ցոյց է տալիս, թէ իւրաքանչիւր առարկայի տեղի հարկին ինչ ծաւալով պիտի անցնել: Սակայն տեղային պայմանները կարող են առաւելութիւն տալ մի քանիսին, միւսներին աւելի երկրորդական տեղ տալով: Ուրեմն տեղի պահանջներին համաձայն որոշ առարկաներ պիտի անցնեն ծրագրիս ծաւալով: Իսկ մնացած առարկաները կը ճատած չափով:

Ք իմիա.

Քիմիայի հիմնական սկզբունքները՝ բազմաթիւ փորձերի մանրամասն բացատրութեամբ: Մի շարք նիւթեր (ոչ-մետաղները) և նրանց գիւղատնտեսութեան համար կարեոր բացարութիւնները՝ թթւածին, ջրածին, բորակածին, անուշագիր (ամմօնիակ), բորակաթթու, լուսակիր, լուսակրաթթու, ծծումբ, ծծումբաջրածին, ծծմբային թթու, ծծմբաթթու (թթուները, հիմնատարբերը, աղերը—սրանց էութիւնը), քլոր, քլորաջրածին, ածխածին, ածխաթթու: Մետաղներ՝ կալիոն, նաղբիոն, աւշակածին,

կալցիոն, մագնէդիտ, պաղեղածին, երկաթ,
սելիցիոն,

Ածխածին, ածխօրսիկ և ածխաթթու,
ճահճային գաղ, լուսաւորութեան գաղ, բոց,
ածխաջրածին, ալկօհօլ, օրգանական թժուներ,
ճարպեր, ածխահիգրատներ, պրոտէիններ, գիւ-
զատնտեսական տեխնոլոգիա:

Բակտերիաներ, նըանց կաղմը (մօրֆօլօգիան).
նըանց կեանքը (բիօլօգիան):

Ֆիզիկա.

Ա. Մագնիսականութիւն (մագնիսականու-
թեան որոշումը: Մագնիսային երևայթներ: Երկը
մագնիսականութիւն) Բ. Էլէկտրականութիւն
(չիմիական երևոյթներ: Գրական ու բացասա-
կան էլէկտրականութիւն: Հաղորդիչ և շը հաղոր-
դող: Էլէկտրօֆօլ: Էլէկտրացող մեքենայ (Լէյ-
զէնեան անօթ): Մթնոլորտալին էլէկտրականու-
թիւն: Զանթարգել: Գ. Ջվողական էլէկտրակա-
նութիւն: Նըա ծագումը: Գալվանական կարեսը
էլէմէնտները: Էլէկտրականութեան ազդեցու-
թիւնները (մագնիսական, տաքութեան և ուսի,
խիմիկական, ֆիզօօգիական ազդեցութիւններ),
մակածակա: (ինդուկցիօն) հոսանքներ (հոսախօս,
ուժամեքենաներ): Էլէկտրաշարժներ: Էլէկտրա-
կան ուժափոխադրութիւն: Դ. Հեղուկ մարմին-
ների մեխանիկան՝ հեղուկների յատկութիւննե-

րը: Հաղորդակից խողովակներ: Ճնշման փո-
խանցումը: Արխիմետեան սկզբունքը: Սպէցի-
ֆիկ կշիռ: Շ. օղաձև մարմինների մեխանիկան՝
օգի ճնշումը: Ծանրաչափ. Օդահան: Վերհան (սի-
ֆօն): Զըհաններ: Սրսկիչներ: Զ. ընդհանուր
ֆիզիկա՝ ընդհանուր որոշումներ: Մարմինների
ընդհանուր յատկութիւնները: Ընդհանուր ոյժե-
րը: Յարակցութիւն, յարում, (զիֆֆուզիա, օս-
մու, մագային խողովակներ), ձգողական ոյժ
(Լոտ: հարթաչափ, ծանրութեանց կենտրօն, հա-
ւասարակշռութիւն):

Ա. Ամուր մարմինների մեխանիկան՝ հասա-
րակ մեքենաներ: Մեխանիկայի ոսկեղին կանո-
նը (Աշխատանքի գաղափարի որոշումը): Բոլոր
մեքենաներ, զարժման արգելառիթներ: Ոյժերի
զուգահեռագիծը: Ազատ վայր գլորւելը: Ջրջա-
նային շարժումները և ճօճանակային ոյժի վրա
հիմած մեքենաները: Բ. Տաքութիւն՝ գաղա-
փարը, տաքութեան աղբիւրները: Լայնացում
(ջերմաչափ, նիւթի կազմի փոփոխութիւնը):
Չողեմեքենայ: Տաքութեան հաղորդումը: Գ.
Եղանակի գիտութիւնը՝ տաքութեան աստիճա-
նը: Օղի ճնշումը: Անձրէ, ձիւն, կարկուտ և
այլն: Եղանակի նախագուշակելը: Դ. Լուսագի-
տութիւն: լոյսի աղբիւրները և տաքածւելը: Ար-
տացոլութիւն (միայն հարթ հայելին) և լոյսի
բեկանումը: Լուսամիոփ ապակիններ: Օպտիկա-
կան ամենահսարակ գործիքները (ոսպնապա-

կի, խոշորացոյց): Ե. Զայնազիտութիւն՝ ձայնի ծագումը և տարածումը: Զայնի արագութիւնը: Հանքաբանը:

Կովկասի կարեռը արագոյն քարերը, քարախաւերը, երկրի մակերեսովի կազմելը, աղբիւրները և այլն:

Բուսաբանութիւն.

(Քոյսերի անատօմիան և ֆիզիոլոգիան).

Քոյսերի հիմնական օրգանները՝ բջիջներ, անօթներ, հիւսւածքի նիւթեր: Մննդառութեան օրգաններ (արմատ, ցողուն, տերի), անսեռ անեցողութեան օրգաններ, պտոյտ, ակն), բեղմնաւորման (ծաղիկները) օրգաններ, բոլոր օրգանների արտաքին ձևը, ներքին կազմը և նըրանց գործունէութիւնը: Մերմեր ու պտուղներ: Քոյսի կեանքը: Բուսական թագաւորութեան բաժանումը:

Մասնակի բուսագիտութիւն կամ Տնկաբանութիւն.

Ա. Ընդհանուր մաս, քոյսերի զիխաւոր հիւսնդութիւնները: Մոլախոտերը և նրանց բնացինց անելը: Բ. մասնաւոր մասը. հացարոյսեր, ընդաւոր բոյսեր, կերաբոյսեր, իւզապտուղներ, ոլորաբոյսեր, գործարանական բոյսեր, բոյսերի կախածութիւնը հողից, նրանց անեցողութեան ժամանակը, Պտղափոխութեան կազմում իւրաքանչիւրի տեղը, ցանքը, պահպանութիւնը և հունձը: Պտղափոխական սիստեմի նշանակութիւնը, Արօտների նշանակութիւնը,

թիւնը ու մշակումը: Արօտների ցանելը և պահպաննելը: Արհեստական և բնական արօտատեղիներ: Մշտակայ արօտներ:

Կենդանաբանութիւն.

Տնային կենդանիների անատօմիան և ֆիզիոլոգիան:

Բջիջները և հիւսւածքի նիւթերը: Ոսկորները: Մսանունք: Անօթներ: Սրտի կազմը և արեան շրջանառութիւնը: Մարսողական օրգանները և մարսողութեան շրջանառութիւնը: Ճնշառական օրգանները և շնչառութիւնը: Նեարդային սիստեմը, աշքի ու ականջի կազմը: Զիու, որոճող կենդանիների և խոզի տարիքը որոշելը: Անասնաբուժութիւն: Կենդանու մարմնի կազմը: Զիու, եղջիւրաւորների և այլոց արտաքինը: Ատամնագիտութիւնը և տարիքի որոշումը:

Ընդհանուր եւ մասնավահութիւն.

Ա. Ընդհանուր անասնապահութիւն՝ կենդանական մարմնի օրգանները, սրանց գործունէութիւնը, առանձնապէս ուշադրութեան առնելով սննդական օրգանները: Կենդանական մարմնի արտաքին տեսքը և սրա նշանակութիւնը՝ կենդանու ոյժերը շափելու և նրա արժէքը որոշելու համար: Մերման և ժառանգական կանոնները: Մերման մէտօդները: Մերման օժանդակիչ միջոցները՝ սերման կայարաններ, Ընտիք սերընդական ցուցակ և սննդագիտութիւն՝ սննդառական նիւթերի խիմիկական բաղադրութիւնը, նրանց սննդական բովանդակութիւնը և նրանց մարսա-

կանութիւնը, Կերի նոսխապատրաստութիւնը. Կերի տեսակները և կերակրելու եղանակները, Կերարաժինների հաշիւը, Կերամիւթիւնի գնահատութիւնը: Բ. մասնաւոր անասնապահութիւն՝ Եղիւրաւոր կենդանու պահպանութիւնը և սերումը: Եղիւրաւոր կենդանու ցեղերը: Սերման համար գործազրւող անասունների ընարութիւնը: Հորթերի խնամատարութիւնը: Եղիւրաւոր կենդանու կերակրումը և հոգատարութիւնը: Կաթնատնտեսութիւն: — Նոյն տեսակէտներից՝ ոչխարապահութիւնը, խոզապահութիւնը: Համառօտ հայեացը մեղւաբուծութեան և թրանապահութեան վրա:

Կենդանիների առողջապահութիւնը եւ անասնաբուժութիւն.

Առողջապահութեան պայմանները. օդը, նրա տաքութիւնը և նրա խոնաւութիւնը, լոյսը, մնունդը. ախոռատունը և կաշու խնամքը: Գլխաւոր հիւանդութիւնների ճանաշումը: Եղիւրների հիւանդութիւնները: Ժանդապահութիւնները: Կըճղակ՝ կազմը, մեծանալը և այլն: Կճղակի ձեերը: Ռաների շարժւածքը և պայտը: Առողջ և հիւանդ կճղակների պայտելը: Կճղակի հիւանդութիւնները և խնամքը: Տնային և կաթնատու կենդանիների ներքին հիւանդութիւնների պատճառները և դարմանումը:

Օգտակար եւ վճառակար կենդանիներ.

Հացաբոյսերի, ընտեղէնի, բանչարեղէնի,

կերաբոյսերի, իւղապտուղների, ոլորաբոյսերի, և զործարանական բոյսերի վնասակար և օդտակար կենդանիները: Պտղամշակութեան և խաղողի վնասակար բուսական ու կենդանական օրգանիզմները: Պտղամշակութեան օդտակար կենդանիները:

Կաթեան և սեսեսութիւն.

Կաթի էութիւնը, ծագումը և ստացումը: Կաթի բաղկացուցիչ մասերը և յատկութիւնները: Կաթի քննութիւնը: Կաթնազործութեան մէջ պատահող ցածր սունկերը: Կաթի շահագործութիւնը: Սերմանատութիւն: Սերի գործազրութիւնը՝ իւղանանութիւն և պանրագործութիւն:

Հողագիտութիւն եւ ազարակագիտութիւն.

Հողերի տեսակները ըստ ծագման ու բաղադրութեան: Հողի ֆիզիկական յատկութիւնները: Հողի հերկելու նպատակը և առանձնակի նպատակների համար անհրաժեշտ մշակութեան գործիքները: Սերմանումը և սրա զանազան եղանակները: Փորելու նշանակութիւնը և ներգործութիւնը: Հողերի նախամշակումը և հողերի բարելաւումը (մէլիօրացիա):

Պարարտացման գիտութիւնը (փրիւրագիտութիւն).

Բոյսերի աճման համար անհրաժեշտ նիւթերը: Ի՞նչ նիւթեր պիտի մատակարարենք հողին փթիրածութեամբ: Կենդանական փթիրը, նրա բաղադրիչ մասերը և յատկութիւնները:

փոփոխութիւնները, որոնց ենթարկում է պահաւած փթիրը: Ի՞նչ միջոցով կարելի է պահպանել փթիրը ախոռում, այնպէս որ նա չը կորցնէ իր կարեռը տաքրերը: Եղբահիւթ, Փթիրանոցը բակում: Փթիրի պահպանութիւնը դաշտի փթիրանոցում: Պարարտացում բուսափթիրով: Մարգկային աղղեղութիւնները: Կրաշող: Դիւզատնութեսական—տեխնիկական արհեստանոցների տականքը: Այրւած հակը և մառնը:

Կարեռագոյն ծախու փթիրները և նրանց նշանակութիւնը որպէս օժանդակիչ պարարտանիւթ գուտ եկամուտը բարձրացնելու համար: Ախոռափթիրի և պարարտանիւթի տարբերութիւնը: Բորակային պարաբանականող: Փոսֆօրաթթային Պարարտահող: Պարարտահողեր, որոնք Փոսֆօրաթթուից բաց պարունակում են և բորակ: Կալիոնային պարարտահող: Պարարտահողի առուծախսի սովորութիւնները: Ի՞նչպէս է պէտք ծախու պարարտահողը տեղ հասցնել: Ընդհանուր սկզբունքներ՝ ծախու պարարտահողի գործազրութեան համար զանազան բոյսերի վերաբերմամբ:

Մարգերի մշակութիւն.

Մարգերի էութիւնը և տեսակները: Մարգագետին: Մարգերի հոգատարութիւնը: Մարգերի պարարտացումը, ջվելը և ցամաքացնելը: Օլրինակներ խոտասերմերի խառնողութեան զրութեան նկատմամբ: Խոտի սննանդական ար-

ժէրի գնահատութիւնը: Կարեռագոյն մարզախոտերը ու բանջարները:

Պաղամեալութիւն, գինեգործութիւն եւ այգեբանութիւն.

Ա. Պաղամշակութիւն, որա նշանակութիւնը: Սերմնարան և տնկարան: Եղնուացման մետողները: Կարեռագոյն միրգերը, մրգածառերի պահպանութիւնը և հոգատարութիւնը: Ոստարանցութիւն: Պարարտացում: Մրգածառերի թշնամիների և հիւանդութեան դէմ մարառումը: Մրգի շահագործութիւնը: Բ. բանջարամշակութիւն. բանջարամշակութեան նշանակութիւնը: Շահարեր բանջարամշակութեան պայմանները: Բանջարանոցի կազմակերպութիւնը: Կարեռագոյն առեստրական բանջարեղենի մշակութիւնը: Նմանօրինակ կերպով և գինեգործութիւնը արծածել:

Մեմենագիտութիւն.

Ակարագային պարզ գործիքները՝ գութան, տափան, գլան: Ճողիի գութան, սերմանելու մեքենայ, պարարտահողը սրսկելու մեքենայ, փորելու մեքենայ, գետնախնձոր տնկելու մեքենայ, հնձելու մեքենայ, գետնախնձոր հաւաքելու մեքենայ, ճակնդեղ հաւաքելու մեքենայ, կասելու մեքենան, կերապատրաստութեան մեքենաներ, կաթնագործական գործիքներ ու մեքենաներ: Մեքենաների պահպանութիւնը:

Դիւզանեսական նարտարապետութիւն.

Ընդհանուր կանոններ, շտեմարաններ խո-

տի, կերի, հացարոյսերի կամ յարդի. ախոռներ,
զոմեր և այլն:

Քաղաքանեսնութիւն.

Մի համառօտ հայեացը հիմնական գաղա-
փարների, խնդիրների, զարգացման և բաժին-
ների վրա: Տնտեսագիտութիւն:

Գործակաւական գիտութիւն կամ գիտական տնտեսութիւն:

Գործավարութեան պարագաները և արդիւ-
նաբերութեան սիչոցները՝ հողաբաժին, ղրամա-
գլուխ և աշխատանք, զանառահանս կան յարա-
բերութիւններ, հաղորդակցութեան ճանապար-
հներ ու սիչոցներ, բանւորական յարաբերու-
թիւններ, էկստինսիւ և ինտինսիւ տնտեսութիւն,
շալժական ղրամագլուխ: Հեռքի աշխատանք,
լծկան ձիու ու եղան օգնութեամբ, մեքենայի
աշխատանք:

Տնտեսական կազմակերպութիւն՝ տեղական
պայմաններ և տնտեսական սիստեմը և սրա
շրջանում առանձին գործավարական ճիւղեր՝
լուսաբանւած մի որոշ օրինակով: Երկրագոր-
ծական սիստեմները և պտղագույնութիւնը:

Տնտեսութեան վարումը սեփականատիրոջ,
կապալառուի կամ կառավարչի ձեռքով, հաշւա-
պահութիւն, զուտ եկամտի հաշիւները: Կալ-
ւածքների գնահատութիւնը: Ռործակցական և
ընկերակցական կազմակերպութիւններ: Եկա-
մտի ապահովագրութիւնը. ապահովագրու-

թիւն հրդեհից, կարկտից, վտանգից, պարաքե-
րից. կեանքի ապահովագրութիւն:

Հաւապահութիւն.

Հաշւապահութեան յառաջաբանը: Հաշւա-
պահութեան անհրաժեշտութիւնը ու նպատակը:
Հարկաւոր աղիւսակների և ցուցակների պատ-
րաստութիւնը: Միակի հաշւապահութեան գանձ-
ագրքի, կայքացուցակի և տարեկան վերջնա-
հաշվի պատրաստութիւնը:

Գիւղանեսական հաւապահութիւն.

Մակարդակների և տարածութիւնների
հաշւարարութիւն: Ախոռավիթիրի, առանձնակի
կուլտուրական բոյսերի արդիւնահանութեան
ծախսերը: Զանազան կերաբաժինների ծախսե-
րի հաշւարարութիւն: Զուտ արդիւնքի հաշւա-
րարութիւնը:

Աշխարհագրութիւն.

Սկզբնական դպրոցում անցած նիւթի կրկնու-
թիւնը: Երկրի հում նիւթերը: Հայրենագիտու-
թիւն: Առետրական աշխարհագրութիւն: Տնտե-
սական աշխարհագրութիւն:

Պատմութիւն

Սկզբնական դպրոցի անցածի կրկնութիւ-
նը: Տնտեսութեան պատմութիւնը: Գիւղատըն-
տեսութեան պատմութիւնը: Գիւղատնտեսու-
թեան առանձին ճիւղերի պատմութիւնը:

(Յատակագծագրութիւն, նախապատրաստութիւն հողաշա-
փուրեան համար).

Քանոնի, ըէյսֆէդէրի, տրանսպորտիրի և
ցիրկուլի գործազրութեան վարժութիւններ: Դը-
ծերի և անկիւնների չտվելը և բաժանելը: Ռւղ-
դագիծ և կորագիծ ֆիգուրների կազմը: Առար-
կանների նկարները պատրաստելը.

Երկրաշափութիւն.

Գծերը, անկիւնները, համադրութիւն, մա-
կարդակների շափուր, ուղղագիծ ֆիգուրներ,
Պիթագօրի տեօրիման, շրջան, էլիպսիա: Եր-
կրաշափական մարմինները (խորանարդ, ոլրի-
զմա, ցիլինդր, պիրամիդ, կօնուս, գունդ, տա-
կառ և այլն:

Հողաշափութիւն եւ հարթաշափութիւն.

Հափելու և հարթաշափութեան գործիքնե-
րի նկարագրութիւնը և նրանց գործածութիւնը
դաշտում, ձողերի գործածութիւնը, ցիցանշան,
շափած գծերի քայլաշափները, հեռաւորութիւնն-
երի որոշելը: Ուղարյայեաց կանդնեցնելը ձո-
ղալին և անկիւնայելու միջոցով: Անկիւններ
շափելը: Փոքը ու մեծ, կանօնաւոր ու անկա-
նոն մակարդակների շափելը, աղձանա-
գրելը և հաշւելը՝ սրա համար հարկաւոր եր-
կրաշափական սկզբունքների հետ միասին: Մի
անորոշ մեծութիւն ունեցող դաշտի բաժանումը
և այլն:

Թւաբանութիւն.

Հորս գործողութիւնները՝ տասնական կո-
տորակներով հանդերձ, պարզ ու բաղադրեալ
թւերի մասին. հաստրակ կոտորակներ (սահմա-
նավակ): Յարաբելութիւնների ու համաշափու-
թիւնների մասին: Դրամները, չափները և կշիռ-
ները—սբանց գիտենալը և գործածութիւնը:
Գիների որոշումներ: Տոկոսի հաշիւներ՝ տոկոսի,
գեղջի, բաժնամասի հաշւելը և այլն:

Յածը դասընթացքի կրկնութիւնը և վար-
ժութիւնը:

Երգասացութիւն.

Միաձայն, երկձայն, եռաձայն ժողովրդա-
կան երգերի մէջ վարժութիւն:

ԴԱՍԵՐԻ ՑՈՒՅԱԿԸ

(Հաբաթական ժամերի թիւր.)

| Առաջական եր | Պատր. | I. | II. |
|------------------------------|-------|-----------|-----|
| | | Դասաւուռն | |
| Ագարակագիտութիւն | 4 | 3 | 4 |
| Տնկարանութիւն | 3 | 3 | 3 |
| Անասնապահութիւն | 3 | 3 | 4 |
| Անասնաբուժութիւն | — | 1 | — |
| Կաթնատնտեսութիւն | 1 | 2 | 1 |
| Մարդա—և արօգագիտութիւն | — | — | 1 |
| Պտղա—և գինեգործութիւն | 1 | 2 | 2 |
| Բանջարացանութիւն | 1 | — | — |
| Մասնաւոր մեքենագիտութիւն | — | — | 1 |
| Բուսա—և կենդանաբանութիւն | — | 3 | 2 |
| Քիմիա | 1 | 3 | 3 |
| Ֆիզիկա | 1 | 3 | 3 |
| Քաղաքանական գիտութիւն | — | — | 2 |
| Գործավարութիւն | 1 | 2 | 1 |
| Հաշւապահութիւն | 1 | 2 | — |
| Աշխարհագրութիւն | 1 | 1 | — |
| Պատմութիւն | — | — | 2 |
| Գիւղտն. ճարտարապետութիւն | — | 1 | — |
| Լաբօրատորի վարժութիւններ | 1 | 2 | 2 |
| Հայոց լեզու | 2 | — | — |
| Ռուսաց լեզու | 2 | — | — |
| Գիւղտնատեսական թւարանութ. | 2 | — | — |
| Հողա—և երկրաչափութիւն և այլն | 3 | — | — |
| Վայելչագրութիւն | 1 | — | — |
| Նկարչութիւն | 1 | — | — |
| Երգ | 1 | — | — |

ՎԵՐՋԱԲԱՆ

Մեր առաջարկած ծրագիրը այնպէս է կազմած, որ նրան կարելի է հարկաւոր փոփոխութեան ենթարկելով՝ յարմարեցնել Կովկասի խւրացանչիւր նահանգի, գաւառի կամ գիւղական համայնքի տեղական պայմաններին. Մեր ծրագիրը պարունակում է միայն ընդհանուր գծերը, իսկ մանրամասնութիւնները արդէն տեղ սկան հանգամանքներից է կախւած: Խւրաբանչիւր շրջանի գպրոցական գնկավարի պարտքն է արցէն՝ ընդհանուր ծրագրին տեղական գոյն տալ, նոյնպէս էլ խւրաբանչիւր գպրոցի ուսուցչի գասատութիւնը պիտի համապատասխան լինի տեղական առանձնայատուկ հանգամանքներին: Ուղղակի՝ լուրջ հայեցողութեան վրա հիմնած ուսուցումն էլ առհաւատչեալ է հանդիսանում, որ բնագիտական դասերը կապւած են լինելու տեղական կարեոր բերքերի, պայմանների, բուսականութեան և կենդանական աշխարհի հետ:

Մեր գպրոցների գարգացման հարցը շափականց լուրջ է և մեր երկրի ապագայի համար չափականց կարեոր նշանակութիւն ունի, ուստի մենք չենք կարող միամիտաբար թոշկոտել մի ծայրանեղութիւնից դէպի միւրը: Անտարակոյս աւելի խելացի կլինի, որ առայժմ գեռ մօտաւոր ապագան ի նկատի ունենանք, և

այնպիսի ծրագրներ կազմենք, որ կարողանանք իրականացնել և այսպիսով հարթել ապահով առաջադիմութեան ճանապարհը, միայն այս մօմենտը ընդունելով, մեր դպրոցը կը ստանայ իր կատարեալ նշանակութիւնը և այնպէս նպաստաւոր կերպով կը ներգործէ, ինչպէս ներգործել են հեռաւոր Դանիայում ժողովրդական դպրոցները:

Գնանք ուրեմն այդ ասպարիզում միջին, ապահով ճանապարհով, այսպիսով միայն իրաւունք կունենանք ասելու, որ մենք ուշադրութեան ենք առել զոյսութիւն ունեցող հ անդամանքները, և այսպիսով միայն իսկապէս կը բարւորւի մեր գիւղական տնտեսութիւնը.

Եյս բանը վերաբերում է նոյնպէս այն գիւղական համայնքներին, որոնց մէջ ազգաբնակութեան մի նշանաւոր մասը պարապում է ոչ թէ գիւղատնտեսութեամբ, այլ որևէ ուրիշ գործով: Երբ բանակցութիւն էր տեղի ունենում ընթացմանը նախապատրաստութեան մասին, կատարեալ իրաւունքով մատնացոյց արին այն բանի վրա, որ իւրաքանչիւր համայնք ունի պիտանի հողի բաւական նշանաւոր քանակութիւն: Այս տեսակ հողերի տէրերի մտքովն էլ չէ անցնում միշտ անմշակ թողնել նրանց: Հոգագութիւնը բարձրանալը ստիպում է հողատէրերին շահագործել իրանց հողերը ըստ կարելոյն ինտենսիվ կերպով: Ուրեմն ըոլոր համայնքների

մէջ կան շատերը, որոնց համար պիտի անպայման արժէք ունենայ գիւղատնտեսական գիտութիւնը: Պետութեան շահը նոյնպէս պահանջում է, որ այսպիսի գիտելիքները տարածւեն ամենուրեք:

Թէս մենք պիտի առաջնորդւենք վերը բերած սկզբունքներով, այնուամենայնիւ, մեր պայմանները ի նկատի ունենալով, պիտի մեզանում լրացուցիչ ու Զմեռային դպրոցները շատ աւելի ընդարձակ շրջանակ ունենան:

Եթէ մենք մտնենք այս ու այն՝ մեծ ճանապարհներից հեռու ընկած գիւղը, այնտեղ կը գտնենք մէկ կամ միքանի անհատներ, որոնք տնտեսութեան ասպարիզում գնում են ամենքի առջեց, օրինակ, հողի մշակութեան, պարագատացնելու, անասնապահութեան և կաթնատրնտեսութեան մէջ: Այսպիսի մէկը առաջնորդ է հանդիսանում՝ գիւղատնտեսական ընկերութիւններ հիմնելիս, կամ ապահովագրութեան գործ սկսելիս և այլն: Ահա այս անհատները գիւղատնտեսական դպրոցների նախկին սպներ են, որոնք մեր առաջին կարապետներն են, որ իրանց սովորած տարածում են լայն շրջաններում և եռանդով ու անձնւիրաբար ծառայում են իրանց համայնքին:

Թող մեր նոր դպրոցը կարողանայ յաջողութիւն ունենալ, ներգործելով գործնական կեանքի վրա, զարգացնելով անասնապահութիւ-

նը և աւելի արդիւնաւոր դարձնելով հողագործութիւնը: Աշորի այնքան չէ վերաբերւում տառածաշնչի խօսքը, որքան երկրագործին, թէ «իրանց պտղից պիտի ճանաչէք նրանց»: Թողմեջ նոր դպրոցը հանդիսանայ իբրև մի չնաշխարիկ սերմնացան, որ առողջ սերմեր ցանելով մեր գիւղացու հոգեկան աշխարհում, դարձնէ նրա նիրտն ու միտքը աւելի զւարժ ու լուսաւոր, որպէսզի գիւղացին կարողանայ ըմբըռնել իր կոշման արժանիքը: Դպրոցի ցանած սերմերը, ինարկէ, կարժանանանան մեր կապոյտ երկնքի ջերմ խնամքին և կը հասունանան...:

Կարծում եմ, ոբ ես կարողացայ՝ որոշ շափով ծանօթացնել ընթեռցողին գիւղատնտեսական դպրոցի նպատակի ու կազմի հետ: Կասկած չկայ, որ իմ արտայայտած կարծիքներից ոմանք ընդգիւմութեան կը հանդիպեն: Այնուամենայնիւ ամենքն էլ կը համաձայնեն ինձ հետ, որ դպրոցի անհրաժեշտութիւնը և նրա տեսակը կարեւրագոյն հարցեր են, և այս պատճառով մենք պիտի ձգտենիր ուսումնասիրել բոլոր այն ճանապարհները, որոնցով հնարաւոր կլինի գլուխ մի բարձրացնել՝ ամբողջ երկրի շահի համար:



ՀՀ Ազգային գրադարան



NL0276991

14664